


ՍՈՒՐԻՈՅ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԵՅԱՆ

Չորեքշաբթի, 21 Սեպտեմբեր 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Հայկաի, Սուեյտայի, Տարաայի եւ Թարթուսի մէջ Տեղական Ինքնակառավարման Մարմիններու (այսուհետեւ՝ ՏԻՄ-ի) ընտրութիւններուն արդիւնքները յայտարարուեցան:



Հայկաի Նահանգի ՏԻՄ-ի ընտրութիւններու դատական յանձնախումբը մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտարարեց Նահանգային եւ քաղաքային խորհուրդներու անդամներուն անունները:

Հայկաի Նահանգի խորհուրդին մաս կազմեց 100 անդամ, իսկ քաղաքային խորհուրդին՝ 50: Նախօրօք Դամասկոսի, Զունեյթայի, Ռաքքայի, Լաթաքիոյ, Յոմսի, Տեր Չօրի, Հասիչէի եւ Համայի դատական յանձնախումբերը յայտարարած էին իւրաքանչիւր Նահանգի ՏԻՄ-ի ընտրուած անդամներուն անունները:

ՓՈՒԹԻՆ ԵՐԵՒԱՆԻՆ ՈՒ ԴԱՔՈՒԻՆ ԶՍՊՈՒՄՈՒԹԵԱՆ ԿՈՉ ՈՒՂԱԾ Է

Երեքշաբթի, 20 Սեպտեմբերին, Զրեմլիկի մեծ պալատի Ալեքսանդրովեան սրահին մէջ, օտարերկրեայ 24 նոր դեսպաններու հաւատարմագրերու ընդունման արարողութեան ընթացքին, Վլատիմիր Փութին Երեւանին ու Պաքուին զսպուածութեան կոչ ուղղած է:



«Կ'ընդգծեմ, որ մեզի համար մօտիկ պետութիւններու միջեւ որեւէ հակամարտային կացութիւն չլուրջ մտահոգութիւն կը յառաջացնէ: Մենք բոլորին կոչ կ'ուղղենք՝ զըսպուածութիւն դրսևորելու, իստօրէն պահպանելու գիտադարձը եւ վրձնականօրէն հետեւելու Ռուսիոյ, Ատրպէյճանի եւ Հայաստանի ղեկավարներու եռակողմ յայտարարութիւններուն», ըսած է Ռուսիոյ Նախագահը:

«ՀԱՊԿ-ի գծով քայլերու կը ձեռնարկուին Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սրումը նուազեցնելու համար», ըսած է Փութին:

«Կ'ուզեմ ընդգծել, որ կազմակերպութեան (ՀԱՊԿ) գծով քայլերու կը ձեռնարկուին հայ-ատրպէյճանական սահմանային գօտիին մէջ կացութեան սրման առումով: Բախումի գօտի ուղարկուած է յատուկ առաքելութիւն՝ ՀԱՊԿ-ի ընդհանուր քարտուղարին գլխաւորութեամբ: Անոր յանձնարարութեամբ է Հաւաքական Անվտանգութեան Խորհուրդին համար առաջարկներ պատրաստել՝ հիմնուելով վիճակի ուսումնասիրութեան արդիւնքներուն վրայ», ըսած է Ռուսիոյ ղեկավարը:

«Օգտուելով առիթէն՝ կ'ուզեմ շնորհակտել եղբայրական հայ ժողովուրդը եւ երկրի ղեկավարութիւնը վաղը Նշուող Անկախութեան տօնին առիթով: Այս տարի միեւնոյն ժամանակ կը Նշուի երկու նշանակալից տարեդարձ՝ մեր երկիրներուն միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 30-ամեակը եւ Բարեկամութեան, համագործակցութեան եւ փոխադարձ օգնութեան հիմնարար համաձայնագրի ստորագրման 25-ամեակը», ըսած է Փութին՝ աւելցնելով. «Մոսկուան եւ Երեւանը կը շարունակեն աշխուժ քաղաքական երկխօսութիւն»:

Փութին յիշեցուցած է, որ միայն 2022 թուականին ինք երեք անգամ հանդիպում ունեցած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ, ներառեալ վերջերս Վլատիմիր Փութինի մէջ՝ Արեւելեան տնտեսական համախմբումին ընթացքին:

«Ռեկլում» կը հաղորդէ, որ Փութին յայտարարած է. «Մենք կը հիմնուինք անոր վրայ, որ վիճելի տարածքային հարցերու լուծման բանային, Ռուսիոյ խորհրդատուական աջակցութեամբ, հայ-ատրպէյճանական սահմանի սահմանազատման երկկողմանի յանձնախումբի ծիրին մէջ արհեստավարժ եւ միացեալ աշխատանքին մէջ է»:

ՅԱԿՈՒՔ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ. «ՈՒՈՒՍԻԱ ԴԷՏԶ Է ԱԲԵԼԻ ՎՃՈՍԿԱՆ ԸԼԼԱՅ»

Բոլորս ալ գիտենք, որ ռազմական գործողութիւններու դադրեցման գլխաւոր դերակատարը Ռուսիան է՝ հակառակ այս խաղերուն եւ յայտարարութիւններուն: Բայց Նաեւ պետք է թերագնահատել Ֆրանսայի թափած ճիգը՝ հարցը ՄԱԿ-ի խորհուրդ տանելով: Այդ ողջունելի է: Մենք միշտ ալ ըսած ենք, որ գնահատելով մէկտեղ Ռուսիոյ ունեցած կարեւոր դերակատարութիւնը, որմէ կը ցանկանք տեսնել աւելի վճռական կեցուածք եւ քիչ մը աւելի իրապաշտ մօտեցում Ատրպէյճանի ոտնձգութիւններուն նկատմամբ, բայց Նաեւ ըսած ենք, որ Միւսքի համանախագահող երկիրները յատուկ պարտականութեամբ եւ ներդրումով, թէ ԱՄՆ-ն, թէ Ֆրանսան, պետք է



Շար.՝ էջ 3 ➤

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԻ ՈՒՂԵՐՅԸ ՀՀ ԱՆԿԱՍՈՒԹԵԱՆ ՕՐՈՒՄԱՆ ԱՌԹՈՎ

21 Սեպտեմբեր 1991-ին Այդ՝ ըսելով անկախութեան, Հայ ժողովուրդը իւրացուց իր դարաւոր երազանքն ու հունաւորեց պատմական ընթացք մը, որուն պսակը Արցախեան ազատամարտն էր, մեծագոյն ձեռքբերումը՝ հայոց երկրորդ պետականութեան փաստացի գոյութիւնը:



Անկախութեան տարեգրութեան արժանապատուութեան էջերը կերտեց սերունդ մը, որ անկախ պետականութեան երազանքին, ազգային իրաւունքներու եւ անոնց իրականացման լծուած պետականութեան համար պատրաստ էր անասելի խիզախումի:

«Հայաստան» դաշինք
 21 Սեպտեմբեր 2022
 Շար.՝ էջ 12 ➤

ՓԵՆՈՍԻ. «ԽՍՏԻ ԿԸ ԴԱՏԱԴԱՐՏԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒ ՎՐԱՅ ԴԱՔՈՒ ՅԱՐՉԱԿՈՒՄՆԵՐԸ»

Երեւանի մէջ ՀՀ Ազգային Ժողովի Նախագահ Ալէն Սիմոնեանի հետ հանդիպումէն վերջ տեղի ունեցած մամլոյ ասուլիսի ընթացքին ԱՄՆ Ներկայացուցիչներու պալատի խօսնակ Նենսի Փելոսին ըսած է, որ Հայաստանը կարեւոր նշանակութիւն ունի ԱՄՆ-ի համար եւ Զոնկրէսի անունով խըստի դատապարտած է «ՀՀ տարածքներու վրայ Ատրպէյճանի յարձակումները»:



«Միացեալ Նահանգները՝ որպէս ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահ, յստակօրէն յայտնած է, որ հակամարտութիւնը չի կրնար գիտադարձական լուծում ունենալ: Մենք կը շարունակենք հետեւիլ իրադարձութիւններուն եւ կը փափաքենք Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան բանակցային, խաղաղ եւ տեսական լուծման հասնիլ», ըսած է ան:

Անդրադառնալով 13 Սեպտեմբերին Հայաստանի ինքնիշխան տարածքներու վրայ Ատրպէյճանի զինեալ ուժերու յարձակման՝ Նենսի Փելոսի ըսած է, որ ԱՄՆ անմիջապէս արձագանգած է՝ կոչ ուղղելով դադրեցնելու բռնութիւնները եւ իրադարձար հաստատելու:

«Մեր պատուիրակութիւնը յստակօրէն ընդգծած է, որ յարձակումը տեղի ունեցած է Ատրպէյճանի կողմէ, Հայաստանի ինքնիշխան տարածքներ»:

Շար.՝ էջ 12 ➤

Խմբագրական

«ՉԱՆԳԵՉՈՒՐԻ ՄԻՋԱՆՑՔ»-ԻՆ ՏԻՐԱՆԱԼՈՒ ԱՏՐՊԷՅՃԱՆԱԹՐՔԱԿԱՆ ԱԽՈՐԺԱԿՆԵՐՈՒՆ ԴԵՍ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՃՆՇՈՒՄԸ Կ'ԸՆԴԱՅՆԻ

Ատրպեյճան եւ Թուրքիա ոգի ի բռին կը պայքարին «Չանգեզուրի Միջանցք»-ին տիրելու եւ իրենց համաթուրանական իղձերը իրականացնելու համար, յատկապէս Հայաստանի իշխանութիւններուն խաղաղասիրական կոչերը օգտագործելով եւ տրովադայի ձին քայլ առ քայլ Հայաստանին մօտեցնելով:

Հայաստանի դեմ վերջին պատերազմը այս նպատակին կը ծառայէր առաւելաբար:

Այդուամենայնիւ, երբ Թուրքիան եւ Ատրպեյճանը գործի լծուեցան ու ցոյց տուին միջազգային օրէնքներն ու տարածաշրջանի երկիրներու ինքնիշխանութիւնը արհամարհող իրենց դրսեւորումները, միջազգային քաղաքական բեմը շարժեցաւ վերջապէս:

Եթէ ամիսներ առաջ «Չանգեզուրի Միջանցք»-ի սպառնալիքը լըրջութեամբ ետ մղելու ճիգեր չէին երեւեր, այսօր տարբեր կողմերէ քաղաքական յստակ ուղերձներ կը հնչէն այդ միջանցքը թուրքեւատրպեյճանական ազդեցութեան ենթակայ չդարձնելու առումով:

Նենսի Փելոսիի Երեւան այցելութեամբ ու Ատրպեյճանին ու Թուրքիոյ ուղղուած յստակ ուղերձով պարզուեցաւ, որ ԱՄՆ դեմ է նման միջանցքի Ատրպեյճանի տրամադրման:

Իրան նոյնպէս սպառնական ոճով արտայայտուեցաւ միջանցքի հաստատման մասին, դիտել տալով որ Իրան տարածաշրջանի սահմաններու ոչ մէկ փոփոխութիւն կ'ընդունի: Իրանի Իսլամական խորհրդարանի Ազգային անվտանգութեան եւ արտաքին քաղաքականութեան յանձնաժողովի ղեկավարը հարցազրոյցի մը ընթացքին յայտնեց, որ «Իրան տարածաշրջանի սահմանները փոխելու երազանքը մղձաւանջի կրնայ վերածել»:

Միւս կողմէ, պետք է ընդգծել, որ Ռուսիա եւս 9 Նոյեմբերի եռակողմ համաձայնութեամբ արձանագրել էր տուած «Չանգեզուրի միջանցք» սահմանումին առնչուող որեւէ հաստատում: Այնտեղ արձանագրուած էր «ճանապարհներու ապաշրջափակում» սահմանումը:

Միջանցքի մերժման յստակ ուղերձներ հնչեցին նաեւ եւրոպական երկիրներէ, յատկապէս Ֆրանսայէն, որուն կարեւորագոյն ճիգը եղաւ Ատրպեյճանի վերջին յարձակումին արձագանգը հասցնել մինչեւ ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդը ու յստակօրէն դատապարտել Ատրպեյճանը Հայաստանի ինքնիշխան տարածք ներխուժելուն համար:

Վերջին շաբթուան միջազգային քաղաքական բեմի զարգացումները ցոյց կու տան, որ նոյնիսկ Հարաւային Կովկասի տարածաշրջանին մէջ ազդեցութիւն բանեցնելու համար մրցակից կողմեր՝ Ատրպեյճանի եւ Թուրքիոյ գործակցութիւնն ու հարաւային Կովկասի մէջ ի նպաստ թուրանական ծրագրի նկրտումները հաշտ աչքով չեն դիտեր, որովհետեւ «Չանգեզուրի միջանցք»-ին տիրապետելու ատրպեյճանաթրքական ձգտումները չեն ծառայեր ոչ ԱՄՆ-ի ու Արեւմուտքի, ոչ Իրանի եւ ոչ ալ Ռուսիոյ շահերուն, նոյնիսկ եթէ տուեալ կողմերը մրցակից երկիրներ են:

Հայաստանի ի նպաստ նման քաղաքական համախմբում մը կըրնայ նպաստել Հայաստանի տարածքային ամբողջականութեան պահպանման եւ ատրպեյճանաթրքական վտանգին դեմ պաշտպանութեան: Հարկ է սակայն հայ քաղաքական ուժերու տարբեր ուղղութիւններով լարուած աշխատանքը, միեւնոյն ատեն Հայոց Բանակի հզօրացման ի նպաստ քայլերու ձեռնարկումը, որպէսզի Հայաստանի Հանրապետութեան տօնը վերածուի գիշումներուն վերջ տալու, Հայաստանի պաշտպանողական համակարգն ու անկախութիւնը ամրագրելու նոր մեկնարկի:

«Գ.»

«ՍԱՌԻՐԱ»- Սուրիոյ նախագահ Պաշշար ալ-Ասատի թելադրանքով, Երկուշաբթի, 19 Սեպտեմբերի առաւօտեան, ելեկտրական սարքաւորումներու փոխադրակառք մը Հալէպ մուտք գործեց՝ Հալէպ նահանգին ելեկտրական իրավիճակը բարելաւելու համար: Սուրիոյ ելեկտրականութեան հաստատութեան ընդհանուր տնօրէն Հայսամ Մայլ-աա լրագրողներուն յայտնեց, որ նախարարութիւնը լուրջ աշխատանք կը տանի նախքան 2022-ի աւարտը, Հալէպի մէջ 150 ելեկտրական փոխակերպիչ գործիքներ տեղադրելու, որպէսզի Հալէպ նահանգին ելեկտրականութեան իրավիճակը ամենամօտ ժամանակամիջոցին բարելաւուի:



«ՍԱՆԱ»- Սուրիական պատուիրակութեան մասնակցութեամբ, Չորեքշաբթի 21 Սեպտեմբերին սկիզբ առաւ ՄԱԿ-ի Ընդհանուր Միութեան 77-րդ շրջանի եօթնօրեայ խորհրդաժողովը:



Սուրիական պատուիրակութիւնը նախագահեց Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ:

«ՍԱՆԱ»- Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատի նախագահութեամբ, Չորեքշաբթի, 21 Սեպտեմբերին սուրիական պատուիրակութիւնը իր մասնակցութիւնը բերաւ ՄԱԿ-ի ընդհանուր միութեան եօթնօրեայ խորհրդաժողովին: Խորհրդաժողովի բացման նիստին Մըքտատ շեշտեց, որ արեւմուտքը պետք է դադրի մարդասիրական եւ բարգաւաճման նիւթերու վերաբերող հարցերը քաղաքականացնելէ, եւ անոր փոխարէն ջանայ Չինաստանի եւ այլ խաղաղութեան պաշտպան երկիրներուն նման գործակցութիւն եւ երկխօսութիւն յառաջացնել:



«Ուաթան Անլայն»- Ապու Տապիի մէջ Սուրիոյ Հանրապետութեան պատուիրակութեան նախագահ, դեսպան Դասսան Ապպաս, Չորեքշաբթի, 21 Սեպտեմբերին խորհրդակցութիւն ունեցաւ Արաբական Միացեալ Էմիրութիւններու մշակութային խորհրդատու, Իմարաթի Համալսարանի նախագահ Չաքի Անուար Նասիպայի հետ:



Կողմերը խորհրդակցեցան երկու երկիրներուն միջեւ մշակութային եւ գիտական յարաբերութիւններու զարգացման միջոցներուն շուրջ:

«Ուաթան Անլայն»- Ռուսիոյ փոխարտաքին գործոց նախարար Միխայիլ Դոկտանով, Երկուշաբթի, 19 Սեպտեմբերին հանդէս եկաւ յայտարարութեամբ ըսելով. «Ռուսիա կ'ողջունէ Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի յայտարարութիւնը՝ Սուրիոյ նախագահ Պաշշար ալ-Ասատի հետ հանդիպում մը ունենալու պատրաստակամութեան գծով»: Այս առնչութեամբ, Ռուսիա պատրաստակամութիւն յայտնեց սոյն հանդիպումի յաջողութեան նպաստելու:



ԱՏՐՊԷՅՃԱՆԻ...

Սկիզբ՝ էջ 4

րդ այն մասին, որ կազ արտահանող Ատրպեյճանի բարեհաճութիւնը շահելու արեւմտեան-ռուսական մրցակցազքը կրնայ վտանգի ենթարկել Հայաստանի ինքնիշխանութիւնը»:

Ատրպեյճանի յարձակողապաշտութեան նկատմամբ ռուսական հիւսաթափեցնող դիրքորոշումները վրդովմունքի ալիք բարձրացուցին հայկական լրատուամիջոցներու եւ ակադեմական շրջանակներու մօտ, որոնք իրենց գայրոյթը արտայայտեցին Հայաստանի ենթադրեալ դաշնակիցին եւ Հաւաքական անվտանգութեան Պայմանագրութեան Կազմակերպութեան գործընկերոջ՝ Ռուսիոյ, Ատրպեյճանի

նկատմամբ աւելի կտրուկ դիրքորոշում չունենալուն համար. ոմանք նախագգուշացուցին ժողովուրդին ու քաղաքական դաշտը, որ «Ռուսերու չափազանց վստահիլը կրնայ յանգեցնել քսանմէկերորդ դարու առաջին տասնամեակներու ողբերգութիւններու կրկնութեան»:

Ռուսական միջամտութեան շնորհիւ, վերջապէս, կարելի եղաւ վերահսկել հակառակորդ երկու երկիրներու միջեւ ստեղծուած իրավիճակը եւ կանխել բախումներու սաստկացումը, սակայն նախատեսելի է, որ տիրող փխրուն կացութիւնը լուրջ մտավախութիւններու լոյսին տակ յանգի նոր պատերազմի, ինչ որ կրնայ Հայաստանը առաջնորդել նախորդ պատերազմներէն շատ աւելի մեծ կորուստներու:

Լուրեր Հայաշխարհին

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՒԱՆԻ ԳՐԱՏԵՆՆԱԿԻ ՈՒՂԵՐԶԸ ՀՀ ԱՆԿԱՍԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒՄՆ ԱՌԹԻ

Այսօր, երբ մեր երկիրը կանգնած է ներքին և արտաքին նոր մարտահրավերների առջև, երբ վտանգուած են մեր Հայրենիքի սահմանները, երիցս խորհելու առիթ ունենք:

Մեր պատմության ներկայ շրջադարձը պարտաւորեցնում է իւրաքանչիւր հայի մտածել ազգային միասնութեան մասին, որը կարող է միակ երաշխիքը դառնալ Հայրենիքի փրկութեան ու յանձնարարութեան:



Հայաստանի անկախութեան տարեդարձը շնորհաւորելով՝ մէկ անգամ եւս փաստենք այն ճշմարտութիւնը, որ եթէ որեւէ պետութիւն իր գաղափարախօսութեան առանցքում չի նայնացնում ազգային ու պետական շահը, դատապարտուած է: Այս համատեքստում պիտի մտահոգութիւն յայտնել եւ դարձեալ բարձրաձայնել, որ Հայոց բանակի թիկունքը ժողովուրդն է:

Այսօր, առաւել քան երբեւէ, պարտաւոր ենք առաջնորդուել այն գիտակցմամբ, որ Հայաստանի անկախութիւնն ու Արցախի ինքնիշխանութիւնը բացարձակ արժէքներ են, որոնք չեն կարող ածանցուել քաղաքական ոչ մի գործընթացի:

Շնորհաւոր տօնդ, Հայաստան:

Համազգայինի Երեւանի գրասենեակ

ՅԱԿՈՐ ՏԵՐ...

Սկզբը՝ Էջ 1

այսպիսի իրավիճակներու մէջ հայաստանցի իրաւապաշտները որդեգրեն: Այդ պահով ողջունելի է, բայց անոնց վերագրել պատերազմի դադարեցումը քիչ մը չափազանցուած է. այս մասին եռաբլուր գիտութեան պալատի մէջ յայտարարեց ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր Խաչատուրեան:

Անդրադառնալով թուրքոյ արձագանգին՝ ԱՄՆ Զոնկրէսի ներկայացուցիչներու պալատի խօսակա Նենսի Փելոսիի Հայաստան այցելութեան եւ հնչեցուցած յայտարարութիւններուն վերաբերեալ, դաշնակցական գործիչը յայտնեց, որ թուրք-

իա լաւ կ'օգտագործէ Արեւմուտքի եւ Արեւելքի մէջ կապերը եւ առաւելագոյն իր շահերը առաջ կը տանի, իսկ այդ շահերուն մէջ է Հայոց Յեղասպանութեան ժխտման քաղաքականութիւնը: «Այդ ուղղութեամբ, կը կարծեմ, որ ԱՄՆ սկզբունքային որոշում գոյացուցած է, որով ընդվզած է թուրքիան, բայց կը կարծեմ, որ այս մէկը մեծ խաղին մէջ մեծ ազդեցութիւն չ'ունենար: Բուն հարցերը ռազմավարական այն հարցերն են, որոնց վերաբերեալ կան լուրջ խնդիրներ, որոնք եթէ չ'ուծուին, ապագային կրնան տանիլ լուրջ առճակատման եւ խզումի», նշած է Տեր Խաչատուրեան:

Մանրամասնութիւնները՝ տեսանիւթի հետեւեալ կապին հետեւելով: <https://youtu.be/qEoJuvEU9jY>

Փելոսի Հայաստանի Այցելութեան Ասփոփող Յայտարարութիւնը Հրատարակեց

Միացեալ Նահանգներու Զոնկրէսի ներկայացուցիչներու տան նախագահ Նենսի Փելոսին հրապարակած է յայտարարութիւն մը՝ ամփոփելով քոնկրէսական պատուիրակութեան եռօրեայ այցելութիւնը Հայաստան:

«Մեր քոնկրէսական պատուիրակութիւնը մեկնեցաւ Հայաստան, որ կարեւոր ճակատ է ժողովրդավարութեան եւ բոլորնապետութեան միջեւ պայքարին մէջ: Մայրաքաղաք Երեւանի մէջ մեր հանդիպումներուն ընթացքին փոխանցած ենք Հայաստանի ժողովրդավարութեան եւ անվտանգութեան աջակցութեան հզօր ուղերձ, յատկապէս Հայաստանի վրայ Ատրայէճանի յարձակումէն ետք: Մեր այցելութիւնը նախատեսուած էր 12 Սեպտեմբերին՝ զինուորական գործողութիւններու մեկնարկէն առաջ:

«Ներկայացուցիչներու տան հայկական յանձնարարութիւններ Ֆրենք Փայոնը, Աննա Էշուն եւ Ճեքի Սփիլըրը եւ մեր այցելութեան սկսանք Ճիժեռնակաբերդի Հայոց Յեղասպանութեան յուշահամալիրին մէջ ծաղկեպսակ դնելով: Այդտեղ մենք աղօթեցինք Յեղասպանութեան ժամանակ սպանուած 1,5 միլիոն հայ տղամարդոց, կիներուն եւ երեխաներուն համար: Քոնկրէսը հաւատարիմ է երաշխաւորելու, որ Յեղասպանութեան ճշմարտութիւնը երբեք պիտի չ'ջնջուի, այդ իսկ պատճառով 2019 թուականին մենք որդեգրեցինք օրինագիծ՝ պաշտօնապէս ճանչնալու Հայոց Յեղասպանութիւնը, որուն նախագահ Պայտըրը արձագանգեց անցեալ տարի իր պաշտօնական ճանաչումով: Պատիւ էր Յեղասպանութեան թանգարան-հիմնարկին կողմէ պարգեւատրուիլ դեսպան Հենրի Մորկընթաուի մետալով՝ Հայոց Յեղասպանութեան ճանաչման եւ իրազեկման բարձրացման մեր աշխատանքին համար:

«Մեր պատուիրակութեան համար պատիւ էր հանդիպիլ վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ բարձրաստիճան այլ պաշտօնատարներու, ներառեալ Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանի եւ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանի հետ: Այս հանդիպումները ապահոված են միտքերու փոխանակում Հայաստանի եւ շրջանին մէջ կայունութեան, խաղաղութեան եւ բարգաւաճման ուղղուած քաղաքականութեան եւ գործողութիւններու վերաբերեալ:



«Մեր այցելութեան համար կարեւոր էր, որ մեր պատուիրակութիւնը այնուհետեւ կ'լոր սեղանի շուրջ հանդիպում կատարեց քաղաքացիական հասարակութեան ղեկավարներու հետ, որոնք արտայայտեցին այս դժուար պահուն իրենց ժողովուրդի մտահոգութիւններն ու կարիքները եւ լոյս սփռեցին Հայաստանի ժողովրդավարութեան եւ անվտանգութեան համար մղուող պայքարին վրայ: Ինձի համար պատիւ էր դիմել այդ ղեկավարներուն՝ խօսք արտասանելով Գաֆեւճեան արուեստի կեդրոնին մէջ, որ հայկական մշակութիւնի գոհարն է, ուր ես Ամերիկայի նուիրուածութեան մասին յստակ ուղերձ ուղղեցի Հայաստանին: Աւելի ուշ հանդիպում ունեցանք Ազգային ժողովին մէջ ծառայող ընդդիմութեան ղեկավարներու հետ: Թէեւ ներքին քաղաքականութեան առնչուած տարակարծութիւններ կան, այդ ղեկավարներուն միջեւ յստակ համակարծութիւն կար, որ Ատրայէճանը պետք է անյապաղ դադարեցնէ իր յարձակումը:

«Տեղեկացուած եւ ստացուած ընդունելութենէն ոգեւէրուած՝ մեր պատուիրակութիւնը կը վերադառնայ Ուաշինկթըն հպարտ եւ պատրաստ յառաջ մղելու Քոնկրէսի երկարամեայ յանձնարարութիւնը ժողովրդավարական Հայաստանի եւ անվտանգ, խաղաղ կրկնաճանաչողականի նկատմամբ», կը յիշուի յայտարարութեան մէջ:

ԻՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՂԵԿԱՎԱՐ. «ԻՐԱՆ ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՐԱԶԱՆՔԸ ՄՂՁԱՄԱՆՁԻ ԿԸ ՎԵՐԱԾԵՒ»

parstoday.com-ի համաձայն, Իրանի Իսլամական խորհրդարանի Ազգային անվտանգութեան եւ արտաքին քաղաքականութեան յանձնաժողովի ղեկավարը ըսած է. «Իրան տարածաշրջանի սահմանները փոխելու երազանքը մի՞ճաւանջի կը վերածէ»:

Ուսիիտ Ջալալզատէ պատկերասփիւռային հարցազրոյցի մը ընթացքին մտահոգութիւն յայտնելով Ատրպայէճանի եւ Հայաստանի սահմաններուն տեղի ունեցած վերջին բախումներուն ըսած է. «Իսլամական խորհրդարանի Ազգային անվտանգութեան յանձնաժողովը կ'ուսումնասիրէ վերջին գարգացումները»:

Ան յայտարարած է, որ Թեհրան Ատրպայէճանի, Հայաստանի, Թուրքմենստանի եւ խորհրդային այլ հանրապետութիւններու հետ եղած է անոնց անկախութեան առաջին իսկ օրերէն եւ տարբեր օգնութիւն ցուցաբերած է այդ երկիրներու կառավարութիւններուն, աւելցնելով որ. «Իրան կը կանխէ տարածաշրջանի սահմաններու փոփոխութիւնը»:



Իրանի տարբեր պաշտօնեաներ նոյնպէս զգուշացուցած են Ատրպայէճանն ու տարածաշրջանի այլ դերակատարներ տարածաշրջանի սահմաններու փոփոխութեան սարսափելի հետեւանքներէն եւ Իրանի կոշտ արձագանգը լուսարձակի տակ առած են, նշելով, որ այդ մէկը Թեհրանի համար կարմիր գիծ է:

ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ԿԱԶՐ ԿՐ ՍՊԱՌՆԱՅ ՀԵՂՁԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ



Սարգիս Գասարյան

Կովկասի հարավարևելեան շրջանին մեջ, Հայաստան-Ատրպեյճան սահմանին զգոյշ անդորրութիւն տիրեց Նախորդ Երկուշաբթի կէս գիշերի Պաքուի զինեալ ուժերուն Հայաստանի ինքնիշխան տարածք կատարի յարձակումէն ետք, որ երկու կողմերէն աւելի քան հարիւրական կէտաք խլեց, արձանագրուեցան նաեւ նկատառելի թիւով վիրաւորներ եւ անհետ կորածներ, ինչ որ Կեդրոնական Ասիոյ ամենէն լարուած կէտերէն մէկուն ցարդ փխրուն վիճակը պարզեց:

Յարձակումը կը համընկներ Ուքրանիոյ պատերազմի զարգացումներուն եւ այն մեծ հարուածին, որ ստացաւ Ռուսիա պատերազմին երկարաձգումով: Հայաստան Ռուսիան կը համարէ իր կարելորագոյն դաշնակիցն ու տարածաշրջանին մէջ ապահովութեան եւ խաղաղութեան միակ երաշխաւորը, ինչ որ կը հաստատէ Մոսկուայի եւ Արեւմուտքի միջեւ մուկանող կազմի պատերազմին զոհը դառնալու Երեւանի մտավախութիւններուն իրաւացիութիւնը:

Անթող Կրակ՝ Սոխիի Տակ

Հակառակ անոր որ Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ բռնկած պատերազմէն վերջ 2020-ին զինադադար յայտարարուած էր, Նախորդ շաբթուան սկիզբը ծայր առած բախումները Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ շարունակուող մարտերուն ամենադաժանը համարուեցան: 2020-ի պատերազմի ընթացքին Հայաստան հսկայ տարածքներ կորսնցուց Լեռնային Ղարաբաղէն (հայկական Արցախէն), որ թէեւ միջազգայնօրէն ճանչցուած է որպէս Ատրպեյճանի կցուած մարզ, սակայն անոր մեծամասնութեամբ հայ բնակչութիւնը անկախութիւն հռչակած էր:



Զառօրեայ պատերազմէն ետք, Հայաստան ստիպուեցաւ ընդունիլ Եռակողմ համաձայնութիւնը, որ կը սահմանէր զինադադար, ապա Մոսկուայի կողմէ պարտադրուած յաջորդական քայլեր՝ երկու կողմերէն աւելի քան 6500 կէտաք խլած կատարի պատերազմի աւարտին:

Այդուամենայնիւ Հայաստանի համար ամենէն մտահոգիչը այն էր, որ վերջին բախումները այս անգամ անցան Լեռնային Ղարաբաղի սահմանները եւ ազերիական կրակը հասաւ Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածք: Հայաստանի պաշտպանութեան Նախարարը յայտարարեց, որ «Հայաստանի հետ արեւելեան սահմանին կեդրոնացած Ատրպեյճանի զինուած ուժերը լայնատարած յարձակում սանձազերծեցին Գորիսի, Սոթքի եւ Ջերմուկի հայկական դիրքերու եւ բնակավայրերու վրայ, օգտագործելով ծակր հրետանի, թնդանօթներ, միջին հեռավորութեան վրայ կրակող զենքեր եւ անօդաչու թռչող սարքեր», մինչդեռ Պաքու կը պատճառաբանէր իր յարձակումը ըսելով թէ կը փորձէր կանխել «հայկական կողմէ ծրագրուող յարձակում մը»:

Հայկական զինուորը յաջողեցաւ ձախողութեան մատնել ատրպեյճանական յարձակումը, յայտարարելով Նախ՝ 49, աւելի ուշ՝ 200 զոհերու եւ մեծաթիւ վիրաւորներու, ինչպէս նաեւ կորած զինուորականներու մասին: «Նահար Արապի» թերթին համաձայն 8 սահմանային պահակազունդի զինուորներ գերեզմարուած են (սակայն այս տուեալները վերջնական չեն տակաւին):

Յարձակումէն անմիջապէս ետք, Երեւան դիմեց ՀԱՊԿ-ին (Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրութեան Կազմակերպութեան),- որ եւրասիական ապահովական կազմակերպութիւն մըն է,- եւ որուն Ռուսիոյ կողքին կ'անդամակցին Նախկին խորհրդային Միութեան անդամ հինգ երկիրներ,- որպէսզի միջամտէ եւ ի գործ դնէ պայմանագրութեան հաւաքական անվտանգութեան յօդուածը, որովհետեւ ազերիական յարձակումը այս անգամ ուղղուած էր Հայաստանի ինքնիշխան տարածքներուն եւ առընդութիւն չունէր Լեռնային Ղարաբաղի պատերազմին հետ, որուն ՀԱՊԿ-ը քառօրեայ պատերազմին չէր միջամտած, այլ դիտորդի դերին մէջ մնացած էր՝ «Ատրպեյճանի միջազգայնօրէն ճանչցուած եւ ոչ թէ Հայաստանի տարածքներուն մէջ տեսնելով այդ օրերու պատերազմը»: Ատրպեյճանի այս վերջին յարձակումին, սակայն, ՀԱՊԿ-ի պարզապէս «կողմերուն զըսպուածութիւն թելադրող անդրադարձը եւ լարուածութիւնը մեղմացնելու միտող ջանքերու խոստումն ու հայ-ատրպեյճանական սահմանին ուժի օգտագործման մերժումը» լրջօրէն մտահոգեցին Երեւանը, որովհետեւ ՀԱՊԿ-ի ստեղծման նպատակը իր անդամներուն հաւաքական ապահովութիւնը պաշտպանելն էր:

Լարուածութեան Սրման Ատրպեյճանի Նպատակը

Հակառակ անոր որ Ատրպեյճան փորձեց արդարացնել իր յարձակումը՝ պատճառաբանելով զայն որպէս հայկական կողմէ ծրագրուած յարձակումի մը կանխումը, սակայն Ատրպեյճանի այս յայտարարութիւնը տրամաբանական չէր թուեր, նկատի ունենալով տարածաշրջանային եւ միջազգային աշխարհաքաղաքական զարգացումները:

Հայաստան, որ յուսահատ դուրս եկաւ Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմէն,- հակառակ 1990-ականներու սկիզբներու պատերազմին յաղթանակած ըլլալուն,- ինչպէս նաեւ յոգնաբեկ դարձած պատերազմի արդիւնքներէն եւ տնտեսական հետեւանքներէն, քաջ գիտէր որ իր դաշնակից Ռուսիան չէր կրնար ունենալ Նախորդ երկու տարիներուն ունեցած դե-

րակատարութենէն աւելին, երբ արդէն զինադադար յայտարարած էր եւ 2000 ռուսական խաղաղապահ ուժ տեղադրած Արցախ, հետեւաբար Հայաստանի համար երբեք տրամաբանական չէր ուժի կիրարկումն ու կացութեան սրումը ընդդէմ յաղթանակ երգող եւ Եւրոպան ու Ռուսիան սիրաշահելու համար կազմ խաղաքարտը օգտագործող Ատրպեյճանի:

Հայ դիւանագետ մը, չունենալով մամուլ յայտարարութիւններով հանդէս գալու հաւակնութիւն, անունը խորհրդապահական ձգելու առաջարկով «Նահար Արապի»-ին յայտնեց որ «Յարձակումին ժամկետը կրնար անակնկալ ըլլալ, սակայն յարձակումը ինքնին անակնկալ չէր երեւանի համար, որ համոզուած էր, թէ Ուքրանիոյ մէջ Ռուսիոյ իւրաքանչիւր ետքալլին պիտի յաջորդէ նման առիթ օգտագործելու պատրաստ ատրպեյճանական կողմէ լարուածութեան սրում»:

Հայ դիւանագետը աւելցնելով ըսաւ, որ «Հայաստանի մէջ բոլորը կը Նախատեսէին, որ Ուքրանիոյ պատերազմի շարունակութիւնը աւելի մեծ առիթներ պիտի ընծայէ Ատրպեյճանին եւ անոր դաշնակից Թուրքիոյ իրենց աշխարհաքաղաքական ծրագիրները կեանքի կոչելու, օգտագործելով այս անկայուն ժամանակահատուածին մէջ Ռուսիոյ իրենց մերձենալու ճիգերը»:

Հայաստանի մէջ քաղաքական տարբեր ուժեր համարեա՝ համակարծիք են այն միտքին շուրջ, որ ատրպեյճանական վերջին յարձակումը կը միտէր ճնշում բանեցնել Երեւանի վրայ, որպէսզի ան ընդունի «Չանգեզուրի Միջանցք»-ը Պաքուին յանձնելու ատրպեյճանաթրքական ծրագիրը: Այս միջանցքը երկրի ծայրագոյն հարաւը գտնուող ռազմավարական ճանապարհին է՝ Իրանի հետ սահմանին:

Հայաստան 9 Նոյեմբերի եռակողմ համաձայնութեամբ խոստացած էր ճամբայ բանալ Ատրպեյճանին դիմաց Պաքուն Եւրոպային կապելու, անցնելով Նախիջեւանի ինքնավար մարզէն եւ Թուրքիայէն. սակայն Ատրպեյճան ճամբաներու տրամադրումով չբաւարարուեցաւ եւ սկսաւ հանդէս գալ «Չանգեզուրի Միջանցք»-ն ու յարակից տարածքները ստանալու պահանջով, ինչ որ կտրականապէս մերժելի էր Երեւանի կողմէ:

Միայն Հայաստանը չէ ատրպեյճանաթրքական այս ծրագիրը մերժողը, սակայն, Իրան եւս յայտարարեց որ կտրականապէս կը մերժէ «Կովկասի հետ իր սահմանի որեւէ փոփոխութիւն», յատկապէս նկատի ունենալով, որ այդ տարածքը Հայաստանի հետ իր միակ սահմանն է, իսկ այդ սահմանին կորուստին եւ Ատրպեյճանի վերահսկողութեան անցնելուն պարագային, Իրան պիտի կորսնցնէ իր միակ վստահելի դրացին՝ Հայաստանը, ի նպաստ Թել Աւիւի ուժեղ դաշնակիցին, Իրանի նկատմամբ կասկածելի ախորժակներ փայփայողին՝ Ատրպեյճանին:

Հայ դիւանագետը շեշտեց, որ «Թեւ Երեւան եւ Թեհրան համաձայն են «Չանգեզուրի միջանցքը» բնաւ Պաքուին չյանձնելուն, այնուամենայնիւ Հայաստան կը բացառէ Թեհրանի կողմէ «այս առումով գործնական որեւէ քայլ ի նախաձեռնումը՝ կանխելու ատրպեյճանաթրքական ծրագիրը, եթէ Պաքուն փորձէ բռնի ուժով խլել միջանցքը»:

Ինչ կը վերաբերի միջանցքին առնչուող Ռուսիոյ դիրքորոշումին, արբիւրը կը նշէ. «Ռուսիա ուրախ պիտի չըլլայ եթէ Երեւան կորսնցնէ միջանցքը ի նպաստ Ատրպեյճանի, այդուամենայնիւ Ռուսիա զգայուն այս ժամանակաշրջանին վտանգի պիտի չենթարկէ Ատրպեյճանի եւ Թուրքիոյ հետ իր յարաբերութիւնները: Հետեւաբար առաւելագոյն բանը որ կ'անկնկալուի Ռուսիայէն՝ երկու կողմերուն՝ Հայաստանի եւ Ատրպեյճանի վերահսկողութենէն դուրս բերելն է միջանցքը եւ զայն Ռուսիոյ ուղղակի վերահսկողութեան տակ պահելն է»:


Ատրպեյճան Կազի «Կերը» Կը Ծօճէ

Ատրպեյճանի միակ պահանջը «Չանգեզուրի Միջանցքը» չէ, որուն կը ձգտի Պաքուն օգտուելով Ուքրանիոյ պատերազմին ընձեռած առիթներէն՝ Ռուսիոյ ազդեցութիւնը կրճատելու, ինչպէս նաեւ Կովկասի մէջ իր դաշնակիցներուն ազդեցութիւնը ամրագրելու. Պաքու կը ջանայ հայկական կողմին ճանչցնել տալ Ատրպեյճանի ցանկալի սահմանները, որպէսզի ճանաչման հռչակագրով Հայաստան իրաժարած ըլլայ նաեւ Լեռնային Ղարաբաղէն, Չանգեզուրէն եւ շարք մը ռազմավարական բլուրներէ, որոնք կը յատկանշուին հայկական եւ ատրպեյճանական քաղաքներու վրայ հսկողութեան կարելոր դիրքերով՝ հայ-ատրպեյճանական սահմանի երկու կողմերուն վրայ: Փոխարէնը Ատրպեյճան ոչ մէկ բան կը խոստանայ Երեւանին, որ պարտուելով վերջին պատերազմը, ցարդ չէ յաջողած զօրաշարժի ենթարկել արդիւնաւետ տարածաշրջանային կամ միջազգային արդիւնաւետ աշակցութիւն քաղաքական թէ զինուորական ճակատներու վրայ:

Ռուսիոյ եւ Արեւմուտքի միջեւ կազմի պատերազմին սրումը բարձրացուց կազմի արդիւնահանման ուղորտին մէջ համաշխարհային առումով առաջատար Ատրպեյճանի կարելորութիւնը: Անցեալ Յուլիսին Եւրոմիութիւնը փոխըմբռնումի յուշագիր ստորագրեց Ատրպեյճանի հետ՝ մինչեւ 2027 Եւրոպա կազմի ներկրումը կրկնապատկելու եւ տարեկան աւելի քան 20 միլիարտ խորանարդ մետրի հասցնելու մասին:

Երբ Ռուսիա յայտարարեց, թէ պիտի դադարեցնէ կազմի մատակարարումը այն երկիրներուն, որոնք կը համաձայնին 7 Սեպտեմբերին Եւրոյան ճանապարհատար Ուրսուլա Ֆոնտեր Լայընի՝ ռուսական կազմի գինի առատաղ սահմանելու առաջարկին, Հայաստանի վրայ յարձակումի առաւօտեան, Ատրպեյճանի կենսուժի Նախարար Փարվիզ Շահպազով թուիթթրի իր էջով յայտարարեց իր երկրին մտադրութիւնը՝ «2022-ին Եւրոպա (ատրպեյճանական կազմի) մատակարարումներու ընդհանուր ծաւալը հասցնել 12 միլիարտ խորանարդ մետրի՝ 2021-ի համեմատ աւելցնելով քանակը շուրջ 31 տոկոսով»:

Հայ դիւանագետը «կը յայտնէ Երեւանի մէջ աճող մտավախութիւնները»



«Ալ-Նահար»

Արաբերէն թարգմանեց
Չարմիկ Պողիկեան

ՏԵՍԱԿԷՏ

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ. «ԻՆՉ Է ԵՂԵԼ ԻՐԱԿԱՆՈՒԹՄ ԵՒ ԻՆՉ ԿԱՐԵԼԻ Է ԱՆԵԼ»

«ՕՐՈՒԱՅ ԶՐԱՍԱՅԱԿԱՆ Է ԴԱՌՆՈՒՄ ՆՈՐ ԲԱՆԱԿՑՈՂԻ, ԻՄԱ՝ ԵՐԿՐԻ ՆՈՐ ԴԵԿԱԿԱՐԻ ՅԱՅՏՆՈՒԵԼ»

Հայաստանի նախկին արտաքին գործոց նախարար (1998-2008) Վարդան Օսկանեան լրատուամիջոցներուն դրկած իր յօդուածով կը վերլուծէ Ատրպէյճանի նոր ռազմական յարձակումը Հայաստանի վրայ եւ կ'առաջարկէ լուծումներ ստեղծուած իրավիճակէն դուրս գալու համար:

«Բանակցային գործընթացքում երկարատեւ փորձ ունեցող ցանկացած մարդ, տեսնելով այսօրուայ իրադարձութիւնները, կարող է շատ յստակ պատկերացնել արդէն երկու տարի հայ հասարակութեանը յուզող հարցի պատասխանը՝ ինչ է քննարկուել 2020-ի Նոյեմբերի 9-10-ին:

Կասկածից վեր է, որ այդ օրը, այդ ժամերին օրակարգի հիմնական թելադրողը Ալիեւն էր: Շուշի մտնելուց յետոյ նա հնարաւորութիւն ուներ ժամերի ընթացքում բըռնազարթելու ամբողջ Արցախը: Դժուար չէ հասկանալ, որ այդ դիրքերում, այդ գիշեր Ալիեւը սեղանին է դրել իր առաւելագոյն պահանջները՝ Ղարաբաղը Ատրպէյճանի մաս, Չանգեզ ուրում միջանցք եւ յօգուտ Ատրպէյճանի սահմանազատման լուծում՝ անկլաւները ներառեալ: Բանակցային գործընթացում լոյսիսկ ամենաթոյլ դիրքերում կողմին դէմը փրկելու հնարաւորութիւնն են տալիս: Իմ ենթադրութիւնն է, որ այդ երեք հարցերը դուրս են թողնուել զինադադարի գրաւոր յայտարարութիւնից, բայց ձեռք է բերուել բանաւոր պայմանաւորութիւն, որի վկան, նաեւ՝ երաշխաւորը, եղել է Փութինը:

Հիմա, երբ այդ պայմանաւորութիւններին իրականացումը ձգձգուում է, Ալիեւ դիմում է ուժային մեթոտներին: Եթէ ելնենք հիմնաւոր այս ենթադրութիւնից՝ այս իրավիճակում Փաշինեանը չունի մասնաւոր ինքնաւարտութիւն, իսկ Ռուսաստանի լուրջութիւնը դառնում է եթէ ոչ արդարացուած, ապա առնուած՝ բացատրելի: Փութինի ձեռքերը կապուած են ոչ միայն իր աշխարհաքաղաքական թուլացած դիրքով, այլեւ Նոյեմբերի 9-ին տրուած բանաւոր խոստման վկան լինելով: Զետեաւար, օրուայ հրամայականն է դառնում նոր բանակցողի, իմա՝ երկրի նոր ղեկավարի յայտնուելը:

Եթէ մի կողմ դնենք յուզական պիտակները եւ ելնենք այն ենթադրութիւնից, որ Փաշինեանի համար ստեղծուած իրավիճակը հաճելի եւ ցանկալի չէ, ապա նա կամ պետք է հերքի այս թեզը, ասի, որ ոչինչ չի խոստացել բանաւոր, ու իր անմիջական քայլերով, այսինքն՝ կտրուկ փոխելով քաղաքականութեան տրամաբանութիւնը, ապացուցի

դա, կամ հրաժարական ներկայացնի: Վերջին իրադարձութիւնները ցոյց տուեցին, որ Ատրպէյճանի համար եւս ռազմական լուծումը ամենահեշտն ու ցանկալին չէ, հետեաւբար Փաշինեանն այստեղ մաներելու հնարաւորութիւն ունի: Եթէ դա չի անում, ուրեմն մնում է ենթադրել, որ կան խոստման կապանքներ:

Նոր բանակցողի յայտնուելը ոչ միայն Հայաստանին կ'ազատի այդ կապանքից, այլեւ կ'ազատի Ռուսաստանի ձեռքերը՝ հապշտապ եւ ոչ շահեկան լուծումների փոխարէն նոր բանակցային փուլ սկսելու համար:

Ինչ վերաբերում է Արեւմուտքին, ապա ակնյայտ է, որ այն Հայաստանի իշխանութեան վարած քաղաքականութեան մէջ տեսնում է Ղարաբաղից հրաժարուելու միտումը, դրանում էլ տեսնում է խաղաղութեան հասնելու ամենակարճ ճանապարհը, որը եւ կը նպաստի Ռուսաստանի ներկայութեան թուլացմանը եւ աստիճանական հեռացմանը տարածաշրջանից: Դրանով թերեւս կարելի է բացատրել ատրպէյճանական ագրեսիայի ժամանակ Արեւմուտքի խաղացած դրական դերը, ճշունքը Ատրպէյճանի վրայ՝ ձեռք բերուած փոխուստ գիւնադադարի արդիւնքով:

Սակայն Արեւմուտքը լոյսալէս Հայաստանի իշխանութիւնների ենթադրաբար տուած խոստման պատանդն է: Ի վերջոյ, ակնյայտ է, որ Երտողանի ռազմատենչ յայտարարութիւնները ԵՄ անդամ Յունաստանի դէմ եւ բազմաթիւ այլ հանգամանքներ, չպետք է որեւէ մէկի մօտ կասկած առաջացնեն, որ Արեւմուտքը լոյսալէս նպատակ, ցանկութիւն եւ պատճառաւորութիւններով պայմանական կողմի լիակատար յարթանակը ցանկանալու:

Զետեաւար, նոր բանակցողի պայմաններում եւ դրա շուրջ ձեւաւորուած նոր մօտեցումներով ու դիւանագիտական թիմով հայկական շահերի հետապնդումը անկասկած հնարաւորութիւն կը ստեղծի կարճ ժամանակում փոխելու նաեւ Արեւմուտքի մօտեցումներն այս հարցում, Արեւմուտքին լոյսալէս շահագրգռելով արագ լուծումների փոխարէն անելի հաւասարակշիռ լուծման համար բանակցութիւններ սկսելու: Բայց դրա համար, դարձեալ, անհրաժեշտ է նոր բանակցող, որը թէ՛ Ռուսաստանի, թէ՛ Արեւմուտքի համար կը ձեւակերպի բանակցային նոր օրակարգ:

Որը պետք է լինի նոր բանակցողի արտաքին քաղաքական հենքը:

Ա) Փոխլրացնող քաղաքականութիւնը: Կան մարդիկ, որոնք պընդում են, թէ այսօր դա հնարաւոր չէ՝ հաշուի առնելով Ռուսաստան -

Արեւմուտք հակասութիւնները: Բայց այստեղ նրանք մոռանում են առնուազն երկու հանգամանք:

Առաջին, որ այսօր Արեւելք - Արեւմուտք հակասութիւնը ոչ թէ պլուկների, այլ առանձին երկրների հակասութիւն է: Ռուսաստան - Արեւմուտք, Չինաստան - ԱՄՆ: Դա չի ենթադրում եւ չի պարտադրում մէկ կամ միւս կողմի հետ լաւ յարաբերութիւններ ունեցող երկրներին ընտրութիւն անել: Եւ դրանից, ի դէպ, լաւագոյնս օգտուում են Թուրքիան եւ Ատրպէյճանը:

Նի համար այս փաստաթուղթը միջոց է պատերազմի արդիւնքում իր ձեռք բերած եւ ակնկալուող ռազմական աւարի օրինականացման եւ միջազգային ճանաչման համար:

Հայաստանի մօտեցումը պետք է լինի Նոյնը: Հայաստանի համար այս փաստաթուղթը պետք է լինի այն միջոցը, որտեղ կը կարողանայ տրամաբանուած, ոչ ծայրայեղական ձեւակերպումներով դրոյթների ներառմամբ հասնել բանակցային լուրջ գործընթացի անհրաժեշտութեան ճանաչման եւ մեկնարկի:



Երկրորդ, որ այսօր Հայաստան կարող է հիմնաւորել այս կամ այն գործընկերոջ հետ ցանկացած խորութեան համագործակցութիւն: Անկախ պատճառներից կամ հանգամանքներից՝ փաստ է, որ 44-օրեայ պատերազմից եւ վերջին իրադարձութիւններից յետոյ Հայաստանում ձեւաւորուել է համատարած հիասթափութիւն Ռուսաստանից: Հայաստանը, ելնելով իր շահերից, պահելով իր յարաբերութիւնների որակը Ռուսաստանի հետ, առանց վարանման հնարաւորութիւն ունի լաւագոյնս օգտագործելու այլ երկրների կողմից իրեն ընձեռուած բոլոր տեսակի հնարաւորութիւնները:

Բ) Նոր բանակցողը եւ նրա թիմը կարիք չունեն ընդհանրապէս հրաժարուելու պայմանագիր կնքելու հեռանկարից: Պարզապէս անհրաժեշտ է փոխել դրա շուրջ ստեղծուած եւ այլոց կողմից ընկալուած առկայ ենթատեքստը: Ատրպէյճա-

Փաստաթղթում անհրաժեշտ է ներառել այն դրոյթները, որոնք շուրջ կը լինի իրական բանակցութիւնների անհրաժեշտութիւն՝ ատրպէյճանական գիւնած ուժերի դուրսբերումը ՀՀ տարածքից: Լեռնային Ղարաբաղի ապագայ կարգավիճակի խընդիրը: գերիների վերադարձը: սահմանազատման բանակցուած, ոչ թէ հապշտապ ու միայն ատրպէյճանական կողմին բաւարարող իրականացումը:

Այլապէս այն, ինչ տեղի է ունենում այսօր, բանակցութիւն չէ, այլ պարտադրանք է Հայաստանին՝ հրաժարուելու Արցախից, ինչը ստիպուած կը լինի ընդունել միայն թէ խաղաղութիւն լինի: Ու այս ձեւակերպմանը տարբեր պատճառներով դէմ չեն արտայայտուում թէ՛ Ռուսաստանը, թէ՛ Արեւմուտքը՝ հիմնականում վերելուով նշուած՝ հայկական կողմի այլ ձեւակերպում տալու անկարողութեան պատճառով:»

Սուրիացի-հայաստանցի գործարարներու հանդիպում: Տեղի կ'ունենայ Երեւանի մէջ 13 Նոյեմբեր 2022-ին:

www.kantsasar.com
www.kantsasar.com
www.kantsasar.com

Թուրքիոյ նուրջ

ԸՍՏ ԹՈՒՔԻ ԳՐՈՖԵՏՈՐԻՆ՝ ԱՄՆ-ԻՆ ԿԸ ՓՈՐՁԵ 2023-Ի ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՓՈԽԵԼ ԷՐՏՈՂԱՆԸ

Կիպրոսի թրքական ինքնահռչակ հանրապետութեան այսպէս կոչուած նախագահի խորհրդական փրոֆեսոր Աթայ Աթունն իր յօդուածին մէջ պընդած է, որ ԱՄՆ նպատակադրած է 2023-ի ընտրութիւններուն փոխել Թուրքիոյ նախագահը:

Ըստ յիշեալ փրոֆեսորին՝ ԱՄՆ-ին դուր չի գար Էրտողանի վարած ինքնուրոյն քաղաքականութիւնը, ուստի կը փորձէ Թուրքիան կրկին ներառել քաղաքական իր պարունակին մէջ՝ ընտրութիւններուն ապահովելով իրեն համար աւելի վերահսկելի թեկնածուի մը յաղթանակը:

Յօդուածի հեղինակին պնդումով, Ուաշինկթըն այդ նպատակով կ'իրականացնէ յաջորդական գործողութիւններու հետեւեալ ծրագիրը.

1. Թուրքիոյ հետ հակամարտութեան մէջ մտնել ԱՄՆ-ի աջակցութիւնը վայելող իր դրացիները:
2. Տնտեսական շրջափակումով արժեզրկել թրքական լիբան եւ նուազեցնել թուրք ժողովուրդին գնողունակութիւնը՝ վատացնելով անոր կենսապայմանները:
3. ԿԳՎ-ի միջոցով արթնցնել կիլիւնական համայնքի քնացած բջիջները եւ սկսիլ թուրք ժողովուրդը հրահրել իշխանութեան դէմ:
4. Ամերիկամետ քաղաքական կուսակցութիւնները եւ հեղինակութիւնները հաւաքել մէկ յարկի տակ եւ ընդդիմադիր շարժումի մեկնարկը խրախուսել:
5. Ամերիկամետ եւ ֆինանսապէս շահագրգիռ թերթերու, պատկերասփիւռի եւ այլ լրատուամիջոցներու միջոցով իշխանութիւնները տկարացնող հրապարակումներ ընել:
6. Ստիպել ժողովուրդը ընդվզելու իշխանութեան դէմ եւ քառս ստեղծել երկրէն ներս:
7. Գործել այնպէս, որ 18 Յունիս 2023-ի նախագահական ընտրութիւններուն ընթացքին նախագահ Էրտողան պարտուի:

Ըստ Աթունի՝ ծրագիրին ամառին քայլը Թուրքիան Յունաստանի հետ հակամարտութեան մէջ մտնելն էր, որ ուղեկցուեցաւ Յունաստանի մէջ ամերիկեան զօրակազմի տեղակայմամբ ու ռազմական եւ տնտեսական աջակցութեամբ, ինչ որ Աթէնքին աւելի համարձակ դարձուց:



Երկրորդ քայլը արեւելեան Միջերկրականի մէջ հարցեր ստեղծելն ու անոնցմով Թուրքիոյ գինեալ ցամաքային եւ օդային ու ծովային ուժերը բաժնելն է իրարմէ:

Երրորդ քայլը Քիւրտիստանի Բանուորական Կուսակցութեան եւ ժողովուրդի Պաշտպանութեան Ուժերուն ռազմական ու ֆինանսական աջակցութիւն ցուցաբերելով խրախուսելն է անոնց Թուրքիոյ սահմաններուն մօտ գործողութիւններ կատարելը, ինչ որ կը յառաջացնէ Թուրքիոյ ժողովուրդին գայրոյթը:

Չորրորդ քայլն ալ, ըստ Աթունի, Հայաստան-Ատրպէյճան բախումները սկսիլը կամ Հայաստանի միջոցով Թուրքիոյ դէմ պրոքսի (միջնորդաւորուած-«Գ.») պատերազմ վարելը:

Այսպիսով, ըստ հեղինակին, Թուրքիոյ գինուած ուժերուն համար 4-5 *Շար. 12 8*

ԹՈՒՔԻՈՅ ՓՈԽԱՆՆԱԿԱԶԸ ԱՆՊՐԱՎՐՁԱԾ Ե ՓԵՆՈՍԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ

«Էրմէնիհայեր»- Թուրքիոյ փոխնախագահ Ֆուաթ Օքթայ Twitter-ի իր էջին գրառումներ կատարած է ԱՄՆ Ներկայացուցիչներու պալատի խօսակցական Ֆելոսիի՝ Հայաստան կատարած այցելութեան մասին:



Ըստ Օքթայի՝ լիովին անընդունելի են Փելոսիի երեւանեան յայտարարութիւնները, որոնք իբրեւ թէ պատմական եւ ներկայ իրողութիւններուն հետ չեն համարուիր ու չեն արտայայտեր անկողմնակալ տեսակէտներ: Թուրքիոյ փոխնախագահը

Փելոսիին նոյնիսկ մեղադրած է «դիւանագիտական ջանքերը խափանումի ենթարկելու» մէջ:

«Մենք վճռականօրէն պիտի շարունակենք կանգնիլ Ատրպէյճանի կողքին, որ 30 տարի անարդար եւ ապօրինի բռնազրաման տակ գտնուող իր հայրենի հողերը ազատելու համար անձնուիրաբար կը պայքարի», գրած է Ֆուաթ Օքթայ:

ՆՇՄԱՐ

ԱՐԻՍՏՈՂՈՍ ԱՂԱՆ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ...



Ս. Մահսէրթեան

Հետեւեալ տեղեկութիւնները անգլիական մամուլէն են, հետեւաբար, Հայաստանի իշխանութիւնն ու անոր սիրահարները պատճառ չունին անոր մէջ տեսնելու «նախկիններուն» մատը:

Հայաստանի հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեան գայրոյթ եւ խոր ընդվզում առաջացուցած է Լոնտոնի մէջ, երբ շաբաթավերջին գացած է Ուեսթմինսթըր տաճար, յարգանք մատուցելու վախճանեալ Էլիզապէթ թագուհիին: Ծանօթ է, որ Անգլիա եւ իր արբանեակները սուգի մէջ են շաբաթ մը ի վեր, թագուհիին մահուան առիթով, յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Երկուշաբթի, 19 Սեպտեմբերին: Աշխարհի մեծամեծերն ալ մասնակից եղած են սուգին:

Խաչատուրեան ինչո՞ւ գայրացուցած է աւանդապահ եւ չափազանց պահպանողական անգլիացիները: Որովհետեւ երբ ան մօտեցած է թագուհիին դագաղին, որուն ամօքնուած ու մուսը կ'անցնէին պետական մարդիկ եւ պարզ մահականացուներ, անոր մէկ ընկերակիցը սկսած է լուսանկարել Խաչատուրեանը, կարծեք թէ հարսանիքի մը կամ այլ ուրախ հանդիսութեան մը ներկայ կ'ըլլար ան:



«Արիստղոմ աղան» Ուեսթմինսթըրի մէջ (Լուսանկարը՝ «Տէյլի Մէյլ» թերթէն)

Fury as president of Armenia and Putin ally is photographed by entourage while posing in front of Queen's coffin in Westminster Hall (որ թարգմանի՝ Կատաղի գայրոյթ, որովհետեւ Փութինի դաշնակից՝ Հայաստանի նախագահին մէկ ընկերակիցը գինջ կը լուսանկարէ թագուհիին դագաղին ամօքնուած): Այլ թերթեր ալ անդրադարձած են «հերոս»ին վարմունքին:

Այդքան ալ բաւ չէ սեպած նախագահը եւ, ըստ անգլիացի լրագրողներու, անընդհատ շաղակրատած է: Մինչդեռ նման պայմաններու մէջ, ո՛չ խօսիլը, ո՛չ ալ մանաւանդ լուսանկարուիլը ընդունելի են, պատշաճ չեն: Խաչատուրեան միակ է եղած, որ լուսանկարուած է եւ շաղակրատած: (Պարոնեան պիտի ըսեր. «Մո՛ւս, Արիստղոմ աղան կը նկարուի...»)

Նպատակ չունինք քննարկելու անգլիացիներուն աւանդութիւնները կամ ազգային սովորութիւնները, յարգանքը այս կամ այն ձեւով մատուցելու կերպերը, ո՛չ ալ իտեալականացնելու այլոց բարբերը: Այլ հարց է նաեւ այն, թէ Հայաստանի իշխանաւորներուն եւ Փութինի դաշնակցութիւնը ի՞նչ ջուրի վրայ է վերջին շրջանին: Սակայն աշխարհի մէջ կայ հիմնական սկզբունք մը, որ լաւագոյնս կը բացատրուի ծանօթ խօսքով մը. «Երբ Հռոմ կը գտնուիս, ըրէ հռոմէացիներուն պէս» (When in Rome, do as Romans do): Այլապէս, Հռոմ մի՛ երթար:

Պարզ է, չէ՞. վարչապետ Փաշինեանի կողմէ իրողապէս նշանակուած նախագահը յայտնապէս ծանօթ չէ փրոթօքոլային տարրական սկզբունքներու: Այսինքն՝ վկայեալ եւ փաստացի տգետ մըն է: Ի դէպ, Ուքրանիոյ տագնապին եւ այլ նկատառումներով՝ անգլիացիք կարգ մը երկիրներու պետական ներկայացուցիչները չեն հրաւիրած այս արարողութեան, սակայն բացայայտ է, որ (յիշեալ թերթին կողմէ «Փութինի դաշնակիցը» յորջորջուող) Խաչատուրեան հրաւիրուած է, եւ մարդիկ կ'ակնկալէին, որ հիւրը գիտնար սուգի մասնակցութեան տարրական դրոյթները: Խաչատուրեան եւ գինջ առաքողները արդեօք մտածած էին, թէ նախորդ նախագահը՝ Արմէն Սարգսեան, «անգլիացիներուն մարդը Երեւանի մէջ» կրնար գոնէ այստեղ օգտակար խորհրդատուութիւն կատարել իրենց, թէ ան, Երեւանէն իր փախուստէն ետք, ամէն կապ իզգած է նախկին խնամատարներուն հետ:

...«Թաւշեայ յեղափոխութենէն» ետք, Հայաստանի մէջ ամէն բան գըլխիվայր շրջուած է. աւանդութիւն, ընտանիք, ազգային եւ մշակութային արժեքներ եւ այլն՝ «ասֆալթին փռուած են» բանիւ եւ գործով:

Եւ ահա կը տեսնենք, որ Հայաստանի սահմանները սկսած են նեղ գալ իշխանաւորներու տգիտութեան դրսեւորումներուն, կը տարածուին դէպի այլ հորիզոններ: Պատճառը այն չէ, որ Ատրպէյճան սկսած է Հայաստանէն ալ պատառներ խլել, կը պատրաստուի այլ հողամասեր եւս նուրբ ընդունելու: Այսինքն, սահմաններուն նեղնալը անմիջական պատճառ չէ, այլ տգիտութիւնն ու անատակութիւնը ամէն օր նոր «նուաճումներ» կ'արձանագրեն այս խմբակին արարքներով: Այս մարդիկը իրենց տգիտութիւնն ու համբակութիւնը լիարժեքօրէն կը ցուցադրեն, հետեւելով «սահմանք քաջաց, գէնն իւրեանց» պատգամին ու ըստ իրենց սովորութեան՝ աղաւաղելով նաեւ գայն:

Պրիմալե

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՐ ԱՂԵՏՆԵՐ



Մարուշ Երամյան

Անցելով շարժումների օրըստ օրը, երբ Հայաստանի դեմ այս նոր պատերազմը պայթեցավ, ինչպես շատերն էին սպասելիք արդեն: Ուրիշներ էին հաւատար, թէ մեկ առաւել մեկի պատկերը անելի քան յստակ էր:

Նշանաւոր խօսք մը կայ, որ յաճախ կը յիշուի՝ «Երբ նոյն քայլերը կ'առնես, ինչպէ՞ս կը սպասես որ արդիւնքը տարբեր ըլլայ»: Եթէ ուրիշներու խրատ տալու համար է, 100% համոզուած կ'ըլլանք այս խօսքով, բայց երբ կարգը մեզի գայ, կը մոռնանք, նոյն բաները կ'ընենք եւ կը գարմանանք որ նոյն արդիւնքին հասեր ենք, մանաւանդ՝ ժխտական արդիւնքի:

Սօստեցող վտանգը շատ անելի շուտ հասաւ, քան կը կարծէիք, քան կը հաւատայիք:



Իսկ Երեւանի մէջ փառատներ կային:

Երեւանը Չինաստանի մայրաքաղաքը չէ, որուն Սիչուանը մայրաքաղաքը Պեյճինկէն 17 ժամ 25 վայրկեան հեռու ըլլայ:

Բայց մենք այդքանէն ալ անելի հեռու կը գգայիք, որովհետեւ չէիք հաւատար, որ վտանգը իրապէ՛ս մօտ է, որ կրնայ որեւէ պահու խուժել մեր կեանքերէն ներս: Չէիք ուզեր ընդունիլ նաեւ, որ երկիրը իր ճակատագրին լքուած ըլլալ կը թուի:

«Երեւանը անջատ տարածք մըն է կարծես. եւ միևնույն երեւանցիք մեծ ցնցում մը չապրին, պիտի չկարենան երեւակայել թէ ի՞նչ կրնայ պատահիլ» կ'ըսեն սփիւռքահայ երիտասարդներ, որոնք կ'ապրին ու կ'աշխատին Երեւանի մէջ:

Կրնայ պատահիլ: Պատահած է արդէն եւ շատ շատեր տագնապի մէջ են՝ ի՞նչ ընել, ինչպէ՞ս դասաւորել ամօրեան ...

Հիմա ի՞նչ ընենք: Ամբողջ երեսուն տարի Սփիւռքը իր կարելին եւ անկարելին ըրաւ Հայաստանի համար, շատ յաճախ «իր բերնէն կտրեց» Հայաստան դրկելու, ինչպէս էր պարագան կարգ մը անգլերէն հանդէսներու, որոնք թէեւ շատ կարեւոր էին հայ գրականութիւնը տարածելու ամուսնով (RAFT, Ararat), բայց դարձեցան:

Փոխարէնը ի՞նչ ուզեց Սփիւռքը Հայաստանէն. ուզեց որ իր հայրենիքը բարգաւաճ ըլլայ, ուզեց որ ապահով ըլլայ այսօրուան եւ գալիք սերունդներուն համար, - մանաւանդ որ երեք կողմէ թշնամիներով շրջապատուած է, - ուզեց որ այս երկիրը լաւագոյնը ըլլայ իրեն եւ բոլոր հայերուն համար, առանց մենք-դուք-ի, ներս-դուք-ի, ախպարներու թէ արեւելա-արեւմտա-ի տարբերութիւններուն:

Չեղաւ:

Որքան երկիրը գեղեցկացաւ, այնքան թշնամիին ախորժակները գրգռուեցան, այնքան ժողովուրդը մեղկացաւ, ուզեց «իր օրը վայելել»: Ինչպէ՞ս սակայն վայելել այսօրը, առանց վաղուան ապահովութեան:

Հիմա ի՞նչ ընենք: Սփիւռքը ինք, որպէս ժողովուրդ, արդէն սպառած է, յոյսի եւ յուսահատութեան միջեւ օրորուելով:

Բարեբախտաբար կան կազմակերպութիւնները, որոնք օրն ի բուն կ'աշխատին բան մը ընելու համար: Հիմա բնաւ պայման չէ որ մենք, որպէս ժողովուրդ գիտնանք թէ անոնք ի՞նչ կ'ընեն, որովհետեւ յաճախ կիսատ-պատասխաններ գիտնալով, կրնանք խանդավառուիլ եւ ... խոչընդոտել աշխատանքները: Չգիտնալը սակայն պայմանաւոր է վստահութեամբ եւ միանակամութեամբ:

Ո՞ր են այս երկուքը: Մանաւանդ վստահութիւնը:

Կը տեսնէք որ բոլոր հարցադրումները մեր, հայերու շուրջ կը բեւեռուին:

Ի վերջոյ մեր երկիրը մենք է որ պիտի պահենք եւ ոչ ուրիշները:

Բայց, ըստ երեւոյթին, այսքանը այնքան ալ յստակ չէ շատերու համար, որովհետեւ կը շարունակուին մենք-դուք-ի «կնիկական» վեճերը, եւ չունեցող բարբառանքները, մեզ մոլորեցնող ելոյթները:

Ի գուր մարդիկ իրար կը յորդորեն գուսալ ըլլալ. բարեկամուհիս Անահիտ Արամունին գրեր է իր պատիւն.

«Հայիտոյախառն, մաղձոտ եւ թունոտ ձեր խօսքերով նախ դուք ձեզի կը վնասէք, որովհետեւ մաղձը ինքնակեղեքող, ինքզինք թունաւորող յատկութիւն ունի. մաղձը նաեւ ձեզ կը տգեղցնէ, կ'աղձատէ ձեր կերպարը»:

Մաղձ ու թոյնով դուք նաեւ ձերիններուն կը վնասէք, ձեր գործակից-ընկերներուն, կը թունաւորէք միջավայրը:

Րաֆֆին, Դեմիտրեանը, Թումանեանը եւ խեղճ ուրիշներ որքան գրեցին, որքան յորդորեցին ... Անօգուտ:

Եթէ շատ չըլլայիք, կարելի էր հեռանալ, ձեզ մեկուսացնել. Բայց շատ էք»:

Պահ մը կը դիտեմ շուրջս, մեր երկրէն միևնույն շրջակայ երկիրներուն մէջ անելի քան կէս դարէ ի վեր ընթացող պատերազմները: Մտածումը որ կու գայ, կը շանթահարէ գիս՝ կրնա՞յ ըլլալ որ մենք, դարերէ ի վեր սխալ հասկցեր ենք կեանքը, որ խաղաղ եւ արդիւնաբեր ամօրեայով ապրիլը չէ, այլ անընդհատ կռիւներ եւ պատերազմներ սարքելով, անհատական թէ հաւաքական կեանքի մէջ, չունեցածին տիրելով:

Բայց ո՞վ է ընդհանրապէս որ անընդհատ կ'ուզէ կռիւներով ինքզինք փաստել: Անշուշտ ան, որ ինքնավստահութիւն չունի իր ոյժերուն վրայ եւ կռիւ-պատերազմով կ'ուզէ հաստատել ինքզինք, իր պետութիւնն ու իր աթոռը: Անշուշտ նաեւ սուտերով, իսկ սուտին դեմ դնելը շատ դժուար բան է, որովհետեւ, - եւ այս մէկը դեռ չեմ հասկցած, - մարդիկ եւ հաւաքականութիւններ շատ անելի արագ հաւատք կ'ընծայեն սուտին, քան ճշմարտութեան:

Որքան ալ փորձենք բացատրել եւ տրամաբանական պատճառներ գտնել, այս կրկնուող պատերազմը կը շլատէ մեզ բոլորս թէ՛ որպէս անհատներ, թէ՛ որպէս ազգ:

Երբ 1988-ին Հայաստանի երկրաշարժը աներեց Սպիտակը, Գիւմրին եւ ամբողջ գիւղեր, ինծի համար շատ դժուար էր ամօրեայ սովորական աշխատանքներս կատարելը:

Չաւակներս փոքր էին տակաւին. ամեն օր գիրենք դպրոց ճամբել կար, ճաշի եւ ընթրիքի պատրաստութիւն կար, ամուսին գործերը կային եւ այլն: Բայց ամեն անգամ որ բան մը կ'ընէի, ինձմէ անկախ միտքս կ'երթար երկրաշարժէ վերապահներուն, որոնք վերջերը որքան ֆիզիքական, նոյնքան եւ անելի հոգիի խոցեր էին:

Արցունքը չէր հոսեր, որովհետեւ գիտէի որ պէ՛տք է շարունակեմ ամօրեանս եւ փորձեմ օգնութեան միջոցներ գտնել:

44-օրեայ պատերազմը շատ անելի ծանր էր իր բերած յոյսով, որ շատ արագ յուսահատութեան վերածուեցաւ, ապա, գոհերուն թիւն ու տարիքը իմանալով, դարձաւ չսպիացող վերջ մը, նոյնքան ամօրեայական տագնապ ստեղծելով: Չաւակներս մեծցեր էին եւ իւրաքանչիւրը իր կեանքը ուներ արդէն: Բայց ամօրեայի իւրաքանչիւր ժամուն չէի կրնար չյիշել գոհուածներուն մայրերը, որոնք ցաւը չեմ համարձակիր ըսել որ կը հասկնամ. ոչ ոք կրնայ գաւազ (երբեմն՝ գաւակներ) կորսնցուցած մօր մը տառապանքը չափել:

Կը խորհէի թէ այդ վերջնաբեր պատերազմին ելքը եւ գոհերուն թիւն մեզի համար պիտի ըլլային արթնցնող այն ցնցումը, որ մեզ պիտի դարձնէր անելի խոհեմ, անելի դիւանագետ, անելի հեռատես, անելի լուրջ:

Բայց ահա կրկին նոյն ոլորապտոյտին մէջ ենք. այս անգամ ելքն իսկ յստակ չէ:

Ի՞նչ ընել: Հռետորական չէ այս հարցումը, այլ ճիշդ հակառակը՝ օրհասական հարցում մըն է, որուն պատասխանը եթէ ամբողջ հայութիւնը միակամօրէն չգտնէ, այն ալ՝ շատ արագ, յստակ չէ թէ վաղուան օրը ի՞նչ պիտի բերէ մեզի:



ՎԵՐԱՄՈՒՏ

Համազգայինի Հալեպի Հայագիտական Հիմնարկի Վարչութիւնն ու Տնօրէնութիւնը կը տեղեկացնեն, որ հիմնարկին 2022-2023 ուսումնական տարեշրջանի քառամեայ ծրագրին դասաւանդութիւնը պիտի սկսի Երկուշաբթի, 3 Հոկտեմբեր 2022-ին, յետմիջօրէի ժամը 4:00-էն 8:00:

Արձանագրութեան եւ յաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել Հիմնարկի գրասենեակ (Համազգայինի Չաւարեան Մշակութային կեդրոն) կամ հեռաձայնել հետեւեալ համարին՝ 0944 277 994:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ՄԱՄՆԱԿՅԵՅԱԲ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇՈՒՐ ՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ 11-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Եկեղեցիներու Զամաշխարհա-
յին Խորհուրդի (Ե.Յ.Խ.) 11-րդ համա-
ժողովը կայացաւ 31 Օգոստոսէն
մինչեւ 8 Սեպտեմբեր 2022-ին, Գեր-
մանիոյ Զարլարու քաղաքին մէջ,
մասնակցութեամբ Խորհուրդի ան-
դամ անելի քան 350 եկեղեցիներու
շուրջ 4000 պատուիրակներու: Զա-
մաժողովը կը կրէր «Քրիստոսի Սե-
րը Աշխարհը Կը Մղէ Զաշտութեան
Եւ Միասնութեան» խորագիրը: Օրի-
նութեամբ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհա-
փառ Զայրապետին, Մեծի Տանն Կի-
լիկիոյ Կաթողիկոսութեան պա-
տուիրակութիւնը համաժողովին իր
գործուն մասնակցութիւնը բերաւ 12
պատուիրակներով - Գերշ. Տ. Կոմի-
տաս Արք. Օհանեան, Գերշ. Տ. Սե-
պուհ Արք. Սարգիսեան, Գերշ. Տ.
Գեղամ Արք. Խաչերեան, Գերշ. Տ.
Նարեկ Արք. Ալեմեգեան, Գերշ. Տ.
Մասիս Եպս. Զօպուեան, Գերայ. Տ.
Յրանդ Ծ. Վրդ. Թահանեան, փրոֆ.
Թենի Փիրի-Սիմոնեան, Սեդա Խը-
տըշեան, Դոկտ. Նորա Գապագեան-
Պայրազտարեան, Վանայ Կիտցին-
եան, Թամար Գանարեան եւ Արագ
Գոճայեան: Յիշենք, որ Գարլա Խի-

Զամաժողովի լիակատար նիս-
տերու ընթացքին թէ՛ յանձնախում-
բերու ժողովներուն մէջ մեր Ս. Աթո-
ռին պատուիրակութիւնը պարզեց
հայ եկեղեցւոյ ու ազգին արդար
պահանջները: Մեծի Տանն Կիլիկիոյ
Կաթողիկոսութեան պատուիրակու-
թեան անդամները մաս կազմեցին
հետեւեալ յանձնախումբերուն. -
Զանրային Զարցերու (դոկտ. Ն. Գա-
պագեան-Պայրազտարեան, դիւա-
նի անդամ), Թեկնածութեան (Թ.
Գանարեան), Ծրագիրի Ուղեցոյցի
(փրոֆ. Թ. Փիրի-Սիմոնեան), Տըն-
տեսութեան (Ս. Խտըշեան) եւ Պատ-
գամի (հայր Յրանդ): Նշենք, որ հայր
Յրանդ կրօնքի եւ հաւատքի ազա-
տութեան վերաբերեալ միջ-եկեղե-
ցական նիստին ատենապետու-
թիւնը վարեց. նիստին կողմէ յառա-
ջացած տեղեկագիրը ԵՅԽ-ի յառա-
ջիկայ ութ տարուան ուղեցոյցին
մաս պիտի կազմէ:

Կարեւորութեան հարկ է նշել, որ
ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Զայրա-
պետը, որ երկու յաջորդական ընտ-
րաշրջանի համար ատենապետած է
ԵՅԽ-ի Կեդրոնական ու Գործադիր



ժողեան (Զայ Եկեղեցւոյ Զամալսա-
րանական Ուսանողներու Միութե-
ան Նախկին անդամ) կը շարու-
նակէ վարել ԵՅԽ-ին մէջ Միջին Արե-
ւելքի բաժնի պատասխանատուի
իր պաշտօնը:

ԵՅԽ-ի Զամաժողովը գերա-
գոյն ժողովն է Խորհուրդին, որ իւ-
րաքանչիւր 8 տարին անգամ մը
կը գումարէ իր նիստերը: Վերջին
համաժողովը տեղի ունեցաւ 2013
թուականին, Պոլսանի մէջ, Զարա-
ւային Զորեա, եւ թագաժառի համա-
ճարակին պատճառով 11-րդ համաժո-
ղովը տարուան մը ուշացումով գու-
մարուեցաւ այս տարի, Գերմանիոյ եկե-
ղեցիներու միասնական հրաւերով:

Մասնակիցները, պատգամա-
ւորները, ներկայացուցիչները, երի-
տասարդները, ուսանողները, հիւրե-
րը եւ դիտորդները համաժողովին
իրենց մասնակցութիւնը բերին գա-
նազան լիակատար նիստերու, միջ-
եկեղեցական գրոյցներու, պաշտա-
մունքներու, վարժանիստերու եւ
դասնական ու տարածաշրջանա-
յին ժողովներու: Զամաժողովի ըն-
թացքին արծարծուեցաւ ու վաւե-
րացուեցաւ Խորհուրդի Կեդրոնական
Վարչութեան մասնաթիւնը, ինչպէս
նաեւ ընտրուեցաւ Նոր Կեդրոնական
Վարչութիւնը:

վարչութիւնները, միաձայնութեամբ
ընտրուեցաւ Կեդրոնական Վարչութե-
ան Նախագահներէն մէկը՝ ներ-
կայացնելով Արեւելեան Ուղղափառ
Եկեղեցիները եւ Միջին Արեւելքը:

Ալեկին, Նարեկ Արք. Ալեմեգե-
ան եւ Յրանդ Ծ. Վրդ. Թահանեան
ընտրուեցան ԵՅԽ-ի Կեդրոնական
Վարչութեան անդամներ:

Յատկանշական է, որ մեր
պատուիրակութեան անդամներէն
եւ Զանրային Զարցերու Յանձնա-
խումբի դիւանի անդամ դոկտ. Գա-
պագեան-Պայրազ տարեանի ջան-
քերով եւ խորհրդակցաբար Վեհա-
փառ Զայրապետին, համաժողովը
որդեգրեց Արցախի հարցին վերա-
բերեալ բանաձեւ: Բանաձեւին մէջ,
որ արդէն իսկ հրապարակուեցաւ,
համաժողովը բարձրացուց հայ
նագմագերիներու վերադարձի հար-
ցը, հայկական կրօնական ու մշա-
կութեային վայրերու եւ կոթողներու
աւերման ու բնաջնջման խնդիրը,
կոչ ուղղեց ԻՆՏՍՔՕ-ին եւ միջազ-
գային ընտանիքին պատշաճ միջոց-
ներ որդեգրելու պաշտպանելու եւ
պահպանելու համար գանձեց, ինչ-
պէս նաեւ՝ ԵԱԶԿ-ի Միւսքի խմբա-
կին, որպէսզի յանձնառու ըլլայ քայ-
լեր առնելու Արցախի հակամարտու-
թեան արդար եւ խաղաղ լուծման:

ԵՐԲ ՈՐ ՄԵՌՆԻՆ



Յովսէփ Եագուպեան

**Յիմա կ'ողբանք-տարիներ վերջ-
վըճիտ հոգւով սուրբերը մեր՝
Որոնք իրենց մարմինը շիթ առ շիթ տուին
Անգութեան զիրենք ծաղրող ու անտեսող աշխարհին:**

**Յիմա կ'ողբանք.
Սակայն շատ ուշ:**

**Մենք Դուրեաններ կը սպանենք
Մեր անտարբեր ու սառ սրտով,
Ու հեզնանքով անոնց վերեւ վիատութիւն կը կոթողենք:
Մեր ամեն մէկ քայլափոխին ո'ղջ Դուրեաններ կը սպանենք,
Ու մարմարին ցուրտ գրկումին դրկելէ ետք
Անոնց աննիւթ հոգիներն անատորեն խուսկ կը ծխենք:**

**Իրենց անհուն աստուածութիւնն ուրացող
Ու մեր մռայլ հոգիներուն սիրահարող
Յիսուսները կը սպանենք.
Ամեն վայրկեան փուշ ու գամով ու ծաղրանքով
Կը ծակծկենք անոնց մարմինն ու հոգին,
Ու երբ վերջին ու ստորնացման դիմաց ընկնին ու հալին,
Մեր փուշերն իսկ, մեր գամերն իսկ կը սրբացնենք,
Կախաղանը յուշարձանի կը վերածենք,
Ու անոր վրայ իրենց արիւնն ու կեանքը
Յեզնող հպարտ աստուածներուն յիշատակին, հոգիներուն-
Յոգիներն անհամար միայն-
Ոսկի արձան կը ձուլենք,
Սակայն շատ ուշ:**

**Արարատի ձիւներուն մէջ սրբացած
Աբովեաններ կը սպանենք
Մեր սեւութեամբ, ատելութեամբ ու դաւերով:
Ու ան որ իր Զանաքեռին բարձունքէն
Յայ հոգիին խորունկներուն կը նայէր,
Անոր համար իր հանճարը կը մեծցնէր,
Այն մեծ հսկան Էութենէն ներս զգաց
Սողալը մեր ատելալառ ներկայութեան,
Ու փշրուիլն իր յոյսերուն,
Ու յօշոտումն իր հոգիին:
Այսօր այնքան անգթորեն կը սպանենք դեռ Աբովեաններ՝
Անոնց սիրտերն ու ապագան բզբտելով.
Ու փողոտուած մարմիններով դիւզացնաբար երբ իյնան
Կեանքէն ոչինչ ոչինչ ըմպած ըլլալով՝
Բայց մահուան դեմ հպարտօրեն,
Մենք՝ ուշացած հիացողներ ու քուրմեր՝
Պերճ մարմարներ կը կանգնեցնենք
Անոնց եթեր ու անզգայ յուշերուն:**

**Յուշարձաններ նիւթ են, նիւթով կը կանգնին,
Բայց հոգիներ նիւթն վե՛ր են, նիւթն անդին ու անգին,
Ու չեն փնտռեր մարմարներու եւ պրոնզի հովանին.**

**Ու կեանքի մէջ դրուած մե՛կ յոյս, մե՛կ խրախոյս ու ժպիտ
Կեանքէն անդին դրուած հազար յուշարձան
Ու Սելյանի ամբողջ բուրմունքը կ'արժեն:**

1951

ԸՍՏ ԹՈՒՐԷ...

Սկիզբ՝ 19 6

ճակատ պիտի բացուի, որոնց հետե-
ւանքով Թուրքիոյ իրաւապահ ուժե-
րուն համար դժուար պիտի ըլլայ
կանխել ներքին յարձակումներն ու
սադրանքները:
Այս ամբողջ գործընթացին զու-
գահեռ ԱՄՆ պիտի փորձէ կարելի
եղածին չափ նուազեցնել թրջակա

լիրայի արժեքն ու հարուածել Թուր-
քիոյ տնտեսութիւնը:
Թուրք փրոֆեսորին համա-
ձայն, վերոթուարկեալ քայլերուն
հետեւանքով ԱՄՆ կը ձգտի յառա-
ջացնել Թուրքիոյ ժողովուրդին գայ-
րոյթը ընդդէմ իշխանութիւններուն
եւ 2023-ի Յունիսի ընտրութիւննե-
րուն ապահովել իրեն համար «խա-
մաճիկ» թեկնածու մը ընտրու-
թիւնը նախագահի պաշտօնին:
Աղբիւր՝ Haber7

Երիտասարդական Ոսպնեակ

ԿԵՃՆՔԻՍ ԵՐԱԶՆԵՐՈՒՄ ՈՒՂԻՆԵՐՈՎ


Սոնա Մատարեան

Կարսն ու Անիին
ինչպէ՞ս փակել աչքերը, ինչպէ՞ս խեղդել յուզմունքը, ինչպէ՞ս չափստ-
սալ, վերջապէս ինչպէ՞ս հաշտուիլ...

Արդէն ուշ է...:

Արեւածագին, երկար տարիներ սպասուած շրջապտոյտը սկսած էր:
Պատմամշակութային պտոյտ մը՝ Ալեքսանդրապոլ, Կիւմրի քաղաքէն դե-
պի դրախտային Ջաւախքի դալարապատ դաշտեր, ծառուղիներ: Երբ Ջա-
ւախք ցուցանակին քովէն անցանք, կրկին հպարտացանք Ջաւախքահա-
յուն հայրենասեր ոգիով, կամքով եւ յարատեւութեամբ...

Անցանք Նինոնցմիւստա ապա Ախալքալաք եւ Լոռիի ազատ գօտիէն,
ուր կանգուն էր «Ամուլսար»-ը ու մենք եւս անոր նման հիացանք «Փարու-
նա» լիճով, որ կարծէք ըսելիք մը ուներ մեզի, սակայն նախընտրեց «լռել»,



հրածոշտ տուիւնը հայ աշուղին ու հասանք անցակէտ:

Միապաղդադ եւ «ցուրտ» էր սահմանը Վրաստանի... սիրտս հասկնալի,
բայց եւ վախազդու տրոփիւնով կը զգաստացնէր զիս պատրաստուելու
յաջորդ կանգամին՝ Թուրքիոյ սահմանին...

Գիտէի, որ փշոտ պիտի ըլլար ճանապարհը, սակայն չէի ուզեր պատ-
կերացնել, թէ ինչպիսի՞ հոգեխառն ապրումներով եւ խիստ բարկութեամբ
պիտի համակերպիմ «անոնց» օրէնքներուն եւ «տ-ի-ր-ու-թ-ե-ա-ն»...:

Այս սահմանը առաւել եւ առաւել սոսկալի «ցուրտ» էր, սրտիս զարկերն
իսկ սառած էին կարծէք: Ապակեայ փեղկին ետեւ նստած էր ճաղատ, դեղ-
նած եւ անժպիտ ու սառած աչքերով պաշտօնէտայ մը, որուն դէմքին վրայ
դաժան մահուան մը տժգոյն տեսիլքը կար կարծէք, մեծ հաւանականութե-
ամբ «Թալէաթի կրկնօրինակն» էր... մտածեցի եւ առաւել սարսուռ եւ ա-
տ-ե-լ-ու-թ-ի-ն-զ գագաթի:

Արամ Զայկազի մտքերով տարուած. «Տէ՛ր Աստուած, հիմա որ կը տես-
նես Թուրքը, արդե՞տք կ'ամչնաս, որ նման ազգ մը ստեղծած են» . «Է՛հ
իկքը՝ Աստուած, գիտէ», մտածեցի:

Եւ այդ վախազդու աչքերուն առանց նայելու երկարեցի ինքնութեանս
տետրը եւ չեմ յիշեր, թէ ի՞նչ ըսաւ, որ կարգս անցաւ եւ դուրս գալով ոտքս
դրի յուզման գագաթնակէտը տա-
նող իմ պապերուն, մեր հերոսնե-
րուն եւ մեծ տառապանքով ու վայ-
րագաբար արտահանուած իմ ժո-
ղովորդին հողերուն վրայ:



Սահմանի երկայնքին՝ «Ծո-
վակն հիւսիսոյ» անվերջ կ'երկարէր
մեր ճամբուն հետ գուգահեռ, կար-
ծէք կը փորձէր հանդարտեցնել
հոգիս խռովքը... արդե՞տք:

Տարածուող պսպղուն եւ կա-
պուտակ լիճն եւ հեռուն կանգուն
Ամուլսարը, որ իր լռին մնչութեամբ կը յիշեցնէր մօտալուտ՝ «Կա՛րս, Կա՛րս,
Կա՛րս, հայրենի հարս, երբ դու Նորից Մայր Զայաստան պիտ վերադառ-
նաս» մեր կարօտի սրտայոյզ երգին տողերը... արցունքներս լուացած էին
գլխուս յենարանը՝ մեզ փոխադրող հանրակառքի ապակին, որ տակաւին
յորդառատ արցունքներու ակնատեսը պիտի դառնար եւ տակաւ պիտի
առաջնորդէր մեզ դէպի անցեալի հպարտութիւն եւ ներկայի ցաւոտ ու մըլ-
կտող ճանապարհներ:

Կանգնած եմ Կարսի ամրակուռ բերդին դիմաց, ուր կայուն բարկութե-
ամբ հանգչած է մեր անցեալի Ս. Կարապետ եկեղեցին, ներկայիս մզկիթի
նոր ինքնութեամբ աղաւաղուած...

Փորձեցիք մտնել «եկեղեցի»: Դռնապանը պարտադրեց մահմետա-
կան կրօնքի պայմանները յարգել ... ոմանք մտան... եւ մերժեցի, ոչ թէ կրօ-
նական անարդարութիւնն էր համար, այլ բիրտ արարքին ցա-
ւը զգալով:

Այնուհետեւ բարձրացանք մեր «յանձնուած Կարս»-ին բերդը... ամրա-
կուռ էր ան, ինչպէս անցեալի մեր ոգին: Բարձր եւ հպարտ էր, ինչպէս մեր

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՆԿԻՆ

ԿԻՍԱՏ ՄԱՅԱԾ ՍԻՐՈՅ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆԸ



Աննա Պետրոսեան

Արեւը կը ծագէր: Անոր շողերը
արդէն սկսած էին սողոսկիլ պատու-
հանէ պատուհան՝ մարդիկը արթն-
ցնելու համար: Կարգը հասաւ ինձի,
քանի մը ձախող փորձէ ետք անոնք
յաջողեցան արթնցնել
զիս:

Երանի արեւուն շո-
ղերը անելի կանուխ հա-
սած ըլլալին: Աչքերս
բացի եւ հանդիպեցայ
անոր: Սովորական
հանդիպում մը չէր այս,
առաջին նայուածքով
սեր որ կ'ընէ այսպէտքեր
ըլլար: Զագած էր կա-
պոյտ հագուստ մը, աչ-
քերը գրաւիչ, գեղեցիկ
ու հմայիչ երիտասարդ մըն էր,
հպարտ կեցուածքով: Չիմք Կապու-
տակ կոչեցի:

16 տարեկան պատանի եմ, սի-
րահարներու աշխարհին մէջ դեռ նո-
րեկ: Սիրահարուեցայ, բայց չգիտ-
ցայ թէ ինչպէ՞ս պիտի արտայայտեմ
սերս: Որոշեցի ծանօթանալ, նախ
ծանօթացուցի ինքզինքս: Կարգը
իրն էր. թէեւ լուռ էր, սակայն աչքե-
րէն ճառագայթող սիրոյ նամակնե-
րը բաւարար էին հասկնալու, թէ սե-
րը փոխադարձ էր:

Շատուրք կ'ուզէի Փարիզ այցե-
լել, այսօր գտայ մէկը, որուն հետ
սերս պիտի վայելէ սիրոյ քաղաքին՝
Փարիզի մէջ:

Գաղափարս յայտնեցի իրեն,
համաձայնեցաւ: Կրնա՞ր մերժել:

Տոմար ապահովեցի, Կապու-
տակը պատրաստեցի, սակայն մոռ-
ցած էի, որ 16 տարեկան աղջիկ մը
առանց հօր արտօնութեան չի
կրնար սահմանը անցնիլ: Զոգ չէ, բո-



լորը գիտէն թէ աղջիկներուն նազը
կ'անցնի իրենց հօր մօտ:

Խօսեցայ հայրիկիս հետ եւ
սպասեցի պատասխանին:

Ի՞նչ պատահեցաւ...: Զօրս
«այոյ»-ն եւ «ոչ»-ը իրար անցան ու
յանկարծ լսեցի ծանր «ոչ» մը:

Նախ նեղացայ, լացի, տոմար
վերադարձուցի. հիմա մեղանը ձեռքս
Կապուտակիս, այսինքն՝ ճամբոր-
դութեան պայուսակիս մասին
կը գրեմ: Ես զինք կը նկարագրեմ
իբրեւ սիրահարս, ճամբորդութեան
ընկերս, որուն հետ ինչպիսի՞ արկա-
ծախնդրութիւններ կրնայիք ապ-
րիլ. ինք ալ պահարանիս վրայ
հանգչած զիս կը դիտէ ու կ'ափսո-
սայ անաւարտ մնացած մեր երա-
զին համար:

Կամքը եւ մեր պատմութեան էջերը... այսօր, սակայն, վարը հանգչած Կարսը
հպարտ ու խեղդուած յուզումի արցունքներով մե՛զ կը դիտէր...:

Ապա...

Անի՛ն... Ա՛խ Անի՛, Անի՛, ծախուա՛ծ Անի, աներուա՛ծ Անի...

Զսկայ եւ տարածուն Անիի աներակներ...

Չարմացած, քարացած, դարպասին դիմաց կանգնած ոչնչութիւն մըն էի
կարծէք, սակայն շուտով ծունկերս շունչ առին եւ դողացին վերջա-
պէս... Զիմա՞ ինչպէս «օտար» այցելու մը, տուրք տալով պիտի յառաջա-
նայի մեր Անի մայրաքաղաքի պարիսպներէն անդին եւ քայլ առ քայլ ըն-
թանայի կիսաւեր, կիսաքանդ եկեղեցիներու անխաչ գմբէթները տեսնե-
լով եւ փլատակ սրբաքարերուն, կիսաքանդ սիւներուն ականատեսը ըլլա-
լով... ասփոսանքն ու արցունքը ոչնչացուցած էին մտածումիս եւ տրամա-
բանութեանս կապը... սակայն Ս. Գրիգոր եկեղեցւոյ խաչով միակ գմբէթն ու
պաղ եւ դատարկ խորանը, պատերուն վրայ հագիւ երեւցող սրբանկարնե-
րը աղօթք բարձրացուցին հոգիս խորքէն, որով ուժ հաւաքեցի եւ կրցայ
հասնիլ միջեւ Արեւելեան Զայաստանը բաժնող Ախուրեան գետը: Արցունք-
ներս յորդեցան եւ նայուածքս հանգչեցաւ հեռո՛ւն երեւցող հայկական գիւ-
ղի մը բարձունքին ծածանող փոքրիկ եւ հագիւ երեւելի եռագոյն դրօշին, որ
կանգնած էր գաղթը մերժած եւ տակաւին հոն ապրող միայնակ հայ պա-
ռաւի մը տնակին վերեւ: Շատ լացի հայ պառաւիկ միակ մնացած ըլլալը
տեսնելով, բայց ժպիտը կրկին ուրուագծուեցաւ դէմքիս վրայ, երբ շօշա-
փեցի հայրենասիրական անպարտելի իր ոգին:

Մեր ճամբան կը շարունակուէր «Ծովակն Վանա» լիճին անվերջ եր-
կայնքով... Պայագիտ, Բերքի, ապա Վան եւ Աղթամար մեզի կը սպասէին
անհամբեր... ինչպէս մենք՝ իրենց:

Յիշելով մեր նուիրական հերոս ֆիտայիները, այգեստան Վանի Զայ-
րիկն ու քաջասիրտ վանեցիները, մտածեցի պահ մը, թէ ինչպէ՞ս պիտի
դիմաւորէի անոնց լու՛ռ, բայց եւ հզօր աղմուկը...

Լուռ հպարտութեան եւ խոր ցաւի յուշերով պիտի շարունակեմ նկա-
րագրել հայկական մեր լեռնաշխարհը՝ յաջորդ թիւերով...:

(Շար. 1)

ԻՆՉ ԿՐՄԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- 

Խոյ
Գործունեայ եւ բոլորին յարգանքին արժանի անձ մըն էք: Սիրային արկածախնդրութիւն մը պիտի ունենաք այս շաբաթ:
- 

Ցուլ
Ձեր բոլոր գործերը դասաւորած էք: Չնախատեսուած ընկերային հանդիպումներ պիտի ունենաք, որոնք շատ արդիւնաբեր պիտի ըլլան:
- 

Երկուորեակ
Այս շաբաթ կարիքը ունիք հանգստանալու: Ատիկա մեծապէս պիտի նպաստէ ձեր առողջութեան եւ հոգեկան աշխարհին:
- 

Խեցգետին
Գնահատեցէ՛ք ձեր կարողութիւնները: Ծանր աշխատանքները հեռու մնացէ՛ք: Բնութեան ծոցին մէջ կարճ հանգիստի մը կարիքը ունիք:
- 

Առիւծ
Ձեր գործերը յաջողութեամբ պիտի պսակուին եւ դուք ի վերջոյ հոգեկան անդորրութիւն պիտի ստանաք: Շաբաթը հաճելի է:
- 

Կոյս
Հարագատի մը քաղցր խօսքերը ձեր կեանքը պիտի իմաստաւորեն: Հեռաւոր երկիրէ մը բարի լուր մը պիտի առնէք:
- 

Կշիռք
Այս շաբաթ ձեր ամսականին յաւելում մը կը նախատեսուի: Ձեր սիրելի անձերը մեծ վստահութիւն ունին ձեր վրայ: Մեծ յաջողութիւն մըն ալ պիտի արձանագրէք:
- 

Կարիճ
Ձեր բարկացկոտ նկարագիրը վեճերու դուռ կը բանայ յաճախ: Հանդարտ եւ բարեացակամ եղէ՛ք: Մի՛ աճապարէք որոշումներ գոյացնելու եւ մարդիկը դատելու:
- 

Աղեղնաւոր
Ձեր առջեւ պիտի բացուի յաջողութեան մեծ դուռ մը, որ նորանոր նուաճումներու պիտի առաջնորդէ ձեզ: Հաճելի անակնկալ մըն ալ պիտի ունենաք:
- 

Այծեղջիւր
Ձեր հաստատակամ կեցուածքը լաւ տպաւորութիւն կը ձգէ բոլորին վրայ: Շաբաթը լի է սիրային արկածախնդրութիւններով:
- 

Զրիս
Չափազանց կը վարանիք գործեր ստանձնելէ: Վստահութեամբ առաջնորդուեցէ՛ք եւ անպայման պիտի յաջողիք:
- 

Ձուկ
Կեղծաւոր մարդոցմով շրջապատուած էք: Մի՛ մտահոգուիք: Ի վերջոյ անոնք պիտի վերանան եւ դուք ձեր բարի գործերուն համար պիտի վարձատրուիք:



ՄԱՐԴՈՒ ԽԱՌՆՈՒԱԾՔԸ ԸՍՏ ԱՆՈՐ ԱՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Գրաբանութիւնը կ'ուսումնասիրէ ձեռագիրին կապը մարդուն խառնուածքին հետ եւ կը պարզէ, թէ ինչ «կ'ըսէ» մարդուն ստորագրութիւնը իր մասին:

Արդարեւ, **դէպի վեր ուղղուած ստորագրութիւնը** կը խորհրդանշէ լաւատեսութիւն, աշխուժութիւն, նպատակաւազցութիւն եւ ստեղծարարութիւն:

Ուղիղ ստորագրութիւնը՝ հաւասարակշռութիւն եւ զսպուածութիւն:

Դէպի վար ուղղուած ստորագրութիւնը՝ վատատեսութիւն եւ թոյլ կամք:

Երկար ստորագրութիւնը՝ խելամտութիւն, յամառութիւն եւ շանասիրութիւն:

Կարճ ստորագրութիւնը՝ արագ արձագանգ, անհամբերութիւն եւ թոյլ կեդրոնացում:

Գլխագիրով սկսած ստորագրութիւնը՝ կամակորութիւն եւ պահանջկոտութիւն:

Նոյն չափի տառերով ստորագրութիւնը՝ համեստութիւն:

Փոքր տառերով ստորագրութիւնը՝ ինքնաբուխութիւն, տնտեսելու ունակութիւն, ճշմարտացիութիւն եւ կեդրոնացում:

Շատ մանր տառերով ստորագրութիւնը՝ եսասիրութիւն եւ ժլատութիւն:

Մեծ տառերով ստորագրութիւնը՝ երազկոտութիւն, անկախութիւն, միամտութիւն, դիւրութեամբ վստահելու միտում եւ բարութիւն:

Չարդարանքներով ստորագրութիւնը՝ պարծենկոտութիւն, իրականութիւնը գունազարդելու պահանջ եւ կեղծաւորութեան հակում:

Սեղմուած ստորագրութիւնը՝ մարտավարութիւն:

Ուժեղ սեղմելով ստորագրութիւնը՝ արտաքին երեւոյթներու համարում եւ ձգտում դէպի կեանքի նիւթական կողմը:

Թոյլ, անհաւասար սեղմելով ստորագրութիւնը՝ անվստահութիւն եւ անելորդ ինքնաքննադատութեան հակում:


Ընդգծուած ստորագրութիւնը՝ ինքնասիրութիւն, հասարակական կարծիքէն կախեալ ըլլալու հակում եւ նեղացկոտութիւն:

Վերէն ընդգծուած ստորագրութիւնը՝ ինքնահաւանութիւն, հպարտութիւն եւ մեծ ձեռքբերումներու ձգտում:

Վրան գծուած ստորագրութիւնը՝ ինքզինք թերագնահատելու հակում, ինքնաքննադատութիւն եւ կասկածամտութիւն:

Վերջաւորութեան կետով ստորագրութիւնը՝ կարգապահութիւն եւ կատարողականութիւն:

Կետով սկսող ստորագրութիւնը՝ նախքան մտածելը գործելու հակում եւ ամեն ոլորտի մէջ սպառնիչ տեղեկութիւն ստանալու ձգտում:



ԼԵՌՆ Ի ՎԵՐ



Չարիտ Կորայանի

Այս այն լեռն է Որ ամենուս բիբին խորն է բելեռուած Որ ամենուս մորթին տակն է - միս ոսկոր, Որ ապրում է, գոյութիւն է իրական Ու երազ է, առասպել է անսահման Այս այն լեռն է Որմէ կու գայ վճիտ ջուրի ուղիներու պէս արիւնը մեր երակին Որուն կ'երթայ օդաւազ համբոյրի պէս վերջին շունչը մեր կուրծքին Այս այն լեռն է Որմէ որքան կը հեռանանք այնքան կը զգանք թէ իրն ենք Որուն որքան կը մօտենանք այնքան կը զգանք թէ ինչ ենք...



Ռաֆֆի Սիկահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

- Սուրիոյ ֆուտբոլի երիտասարդական հաւաքականը յաջողեցաւ իր տեղը գրաւել յառաջիկայ տարուան ընթացքին ՈւԷֆԱ-ի մէջ տեղի ունենալիք Ասիոյ ախոյեանութեան մրցաշարքին: Յորդանանի մէջ տեղի ունեցած արեւմտեան Ասիոյ մրցումներուն, Սուրիոյ կազմը գրաւեց աղիւսակին երկրորդ հորիզոնականը՝ 4 - 1 արդիւնքով պարտութեան մատնելով Թուրքմենիստանը: Սուրիա կրցաւ յաղթել նաեւ Մարիանա կղզիին 10 - 0 արդիւնքով, ինչպէս նաեւ Զինաստան-Թայլանտին 1 - 0 արդիւնքով: Սուրիոյ հաւաքականը պարտութեան մատնուեցաւ միայն Յորդանանէն՝ 2 - 1 արդիւնքով:



- Սուրիոյ ֆուտբոլի հաւաքականի մարզիչ Զուսամ ալ-Սեյիտ հրապարակեց այն 23 խաղացողներուն անունները, որոնք իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Յորդանանի մէջ տեղի ունենալիք բարեկամական մրցաշարքին: Կազմէն կը բացակային Օմար Խրեպիւնը, Մուհամմետ եւ Իյազ Օսմաններն ու զարպասապահ Իլիաս Զատայան՝ վիրաւորուած ըլլալուն պատճառով:

- Կիրակի օր Դամասկոսի Սաուրայի պասքեթի աղջկանց խումբը մեկնեցաւ Թունուս, իր մասնակցութիւնը բերելու Արաբական ակումբներու մրցաշարքին:

- Սուրիոյ ֆուտբոլի Ա. մակարդակի ախոյեանութեան, Զալէպի Աիլի 1 - 1 հաւասարութեամբ աւարտեց Ֆութուլի հետ կատարած հանդիպումը, իսկ Ուասպէն 2 - 0 արդիւնքով յաղթեց Դամասկոսի Ուահտէին. ճապլէն շարունակելով իր յաղթական երթը 3 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց Թալիան, իսկ Զըթթիւնը 1 - 0 արդիւնքով յաղթեց Թիշրիին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՍՊԱՆԻՈՅ ՊԱՍՔԵԹԻ ԶԱՄԱՔԱԿԱՆԸ ԵՐՈՂԱՅԻ ԱՆՈՅԵԱՆ ԶՆԱԴԻՍԱՅԱԲ

Գերմանիոյ Պերլին քաղաքին մէջ տեղի ունեցած Եւրոպայի պասքեթի ախոյեանական մրցումներուն, Սպանիան յաջողեցաւ ձեռք ձգել տիտղոսը, աւարտական մրցումին 88 - 76 արդիւնքով պարտութեան մատնելով Ֆրանսան: Վերջին վեց տարիներուն, այս չորրորդ անգամ է, որ Սպանիա կը տիրանայ Եւրոպայի ախոյեանութեան, իսկ Ֆրանսան 2013-ին արժանացած է տոյն կոչումին, իսկ երեք անգամ գրաւած է երկրորդ դիրքը:



Զիւրընկալ երկիրը՝ Գերմանիան գրաւեց երրորդ հորիզոնականը 82 - 69 արդիւնքով պարտութեան մատնելով Լեհաստանը: Ռեալ Մատրիտը յաղթական աւարտեց Մատրիտի Զլասիթոն Սպանիոյ ախոյեանութեան 6-րդ փուլի մրցումներուն Ռեալ Մատրիտը 2 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց հիւրընկալ Աթլետիքո Մատրիտը: Զանդիպուսին, Ռեալին կոլերը նշանակեցին Ռոտրիկոս 18-րդ եւ Վալվերտին 36-րդ վայրկեանին: Աթլետիքոյի միակ կոլը նշանակեց Մարիո Զերմսոն 83-րդ վայրկեանին: Զաթալունեական ակումբ, Պարսելոնան նաեւ շարունակելով իր յաղթական երթը 3 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Էլչին: Լիվանտովեսքին նշանակեց երկու կոլ, իսկ երրորդը նշանակեց Տիպայը:

Գերմանիոյ Գերմանիան գրաւեց երրորդ հորիզոնականը 82 - 69 արդիւնքով պարտութեան մատնելով Լեհաստանը: Ռեալ Մատրիտը յաղթական աւարտեց Մատրիտի Զլասիթոն Սպանիոյ ախոյեանութեան 6-րդ փուլի մրցումներուն Ռեալ Մատրիտը 2 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց հիւրընկալ Աթլետիքո Մատրիտը: Զանդիպուսին, Ռեալին կոլերը նշանակեցին Ռոտրիկոս 18-րդ եւ Վալվերտին 36-րդ վայրկեանին: Աթլետիքոյի միակ կոլը նշանակեց Մարիո Զերմսոն 83-րդ վայրկեանին: Զաթալունեական ակումբ, Պարսելոնան նաեւ շարունակելով իր յաղթական երթը 3 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Էլչին: Լիվանտովեսքին նշանակեց երկու կոլ, իսկ երրորդը նշանակեց Տիպայը:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 408)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1									■			
2			■									
3								■			■	
4		■										
5					■			■				
6						■			■			
7							■			■		
8								■				
9		■										
10			■							■		
11												
12	■											■

Հորիզոնական

- Ասացուածքը կ'ըսէ. «..... համապատասխան ոտքը երկաթ»: Մեկնիր:
- Բայական լծորդութիւն: Սասնոյ ֆիտայիներէն՝ Խմբապետ Մուշեղի մականունը:
- Կրկնուած բաղաձայններ: Իգական անուն:
- Հաց: Արական անուն:
- Արամայիս Սահակեանի խմբագրած երգիծաբերթը: Բայական լծորդութիւն: Թատերական գործողութեան բաժանում:
- Խումբ, դաս: Տարածքի միաւոր:
- Կրակ մարող: Կերպ, ձեւ: Տառի մը անունը:
- Հասկնալ, ըմբռնել: Գրական գործ:
- Երկերես:
- Տառի մը հարեանները: Խից հանելու գործիք:
- Լրագիր, օրաթերթ: Գունաւոր հիւսուածք, որ պսակուողներուն գլխուն կը դնեն:
- Փոքրացնող մասնիկ: 34: Անունագլ:

Ուղղահայեաց

- «Թշուառները» գրական գործին հեղինակը:
- Միջոց, հնարք: Սերունդ: Անվճար:
- Խոպան, կորո: Աղբիւր:
- Կաթի սեր: Աստուած Իր անունը յայտնեց Մովսէս մարգարէին ըսելով. «Ես եմ որ»: 43:
- Գիւղաքաղաք: Օգնել, օժանդակել:
- Խնայոտ հաստ ձայն: Մարտողութիւնը դիւրացնելու համար մաղձ արտադրող գործարան:
- Մտապատկեր: Հակառակ՝ տառի մը հարեանները:
- Անասունի սատակ: Աչքի մասերէն:
- Կլայել:
- Միջնադարեան Հայաստանի հոգեւոր եւ մշակութային կարեւոր կեդրոններէն: Ծաղկապ: Տառի մը անունը:
- Հակառակ՝ անձնական դերանուն: Հակառակ՝ տարածքի միաւոր: Հակառակ՝ արու (մարդ, կենդանի, բոյս): Հակառակ՝ տառի մը անունը:
- Անկարող: Նախընթաց:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 407)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ա	ա	ա	կ	տ	ի	լ	ի	մ			
2	ե	ս	ա	յ	ի	ս	ի	ո	ա			
3	ն	պ	բ	ր	կ	ա	ն	կ	ա			
4	տ	ա										
5	ե	ր	դ	ի	կ	ծ	ի	ա	ծ	ա		
6	կ	է	ր	ա	յ	ո						
7	ո	ւ	մ	պ	է	տ	մ	ո	ւ	ր	ճ	
8	ս											
9	տ	ա	տ	ր	ա	կ	կ	ա	ն	ա	ճ	
10	է	ա	ց	ն	է	ն	ա	ր	կ	ա		
11												
12	մ	ա	ր	մ	ա	ջ						

ԼՈՒՐԵՐ

ԵՐԿՐՈՒՆԵՐՈՒ 26/9 17° 33°	ԵՐԵՐԵՐՈՒ 27/9 18° 34°	ԳՈՐԵՐԵՐՈՒ 28/9 18° 34°	ՀԻՎԵՐՈՒ 29/9 19° 35°	ՈՐԲԱՐ 30/9 20° 37°	ՇՈՐԱՐ 1/10 20° 36°	ԿԻՐԱԿԻ 2/10 20° 35°
--	---	--	--	--	--	---

ՀՈԳԵՀԱՆՊՍԵՏԱՆ ՊԱՇՏՈՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՄ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՅԱՐՉԱԿՈՒՄՆԵՐՈՒՆ ԶԵՏԵԻՆԵՐՈՎ ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ ԶԻՆՈՒՐՆԵՐՈՒ ԵՒ ՀԱՅՈՐԴԻՆԵՐՈՒ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Նախագահությամբ հայ երեք հոգեւոր պետերուն՝ Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդի Տեղապահ Յոզ. Տ. Մանուկ Աբղ. Պարիխանեանի, Բերիոյ Թեմի Կաթողիկէ Յայոց Առաջնորդ Արիի Տ. Պետրոս Աբղ. Միրիաթեանի եւ



Սուրիոյ Յայ Աւետարանական Համայնքի Համայնքապետ Վերապատուելի Դոկտ. Յարութիւն Սելիմեանի, Կիրակի, 18 Սեպտեմբեր 2022-ի առաւօտուն, Յալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յետ Սուրբ եւ Ամմահ Պատարագին, Հոգեհանգստեան Պաշտօն կատարուեցաւ:

Համայնքապետներուն կողքին ներկայ էին՝ ՀՀ Յալէպի Գլխաւոր Հիւպատոս Բարգէն Պատալեան, Հիւպատոսութեան Խորհրդական Դաւիթ Թադեոսեան, ՀՀ Մարդասիրական Առաքելութեան Խումբի պատասխանատուն, Սուրիոյ Խորհրդարանի հայ երեսփոխաններ, ազգային գործիչներ, Ազգային Վարչութեան անդամներ, ազգային մարմիններու եւ միութիւններու ներկայացուցիչներ եւ համայնքի զաւակներ:



թարութիւնը պարգեւէ:

Աւարտին, Յայր Սուրբին հիւրընկալութեամբ, եկեղեցւոյ «Սուրենեան» դահլիճէն ներս հոգեւոր պետերը, Սուրիոյ խորհրդարանի Երեսփոխանները, ազգայիններ եւ Ազգ. Վարչութեան անդամներ դատապարտելով օրեր առաջ Ատրպէյճանի կողմէ Հայաստանի դէմ յարձակումները, իրենց խորագրաց ցաւակցութիւնները յայտնեցին ՀՀ Յալէպի Գլխաւոր Հիւպատոսին, Հիւպատոսութեան Խորհրդականին եւ Մարդասիրական Առաքելութեան Խումբի պատասխանատուին, մաղթելով, որ Հայաստանի ու Արցախի սահմաններուն շուտով խաղաղութիւն վերահաստատուի:



Յիշատակն արդարոց օրինութեամբ եղիցի:

ԱՂՈԹԻ ՕՐ ԶՈՐԵՔՆԱԲԹԻ 21 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Չորեքշաբթի, 21 Սեպտեմբերին, Հայաստանի Հանրապետութեան անկախութեան օրը, հեռու ամեն տեսակ տոնախմբութիւններէ ու ցուցական երեւոյթներէ, իւրաքանչիւր հայու համար հարկ է դառնայ ԱՂՈԹԻ ՕՐ:

Արդ, եկեք, սիրելի հայորդիներ, անհատաբար թէ հաւաքաբար, իւրաքանչիւր իր վայրին մէջ եւ իր եղանակով աղօթենք՝



Աղօթենք, մեր գոհուած Նահատակ զինուորներուն եւ ազգակիցներուն հոգիներու խաղաղութեան համար:

Աղօթենք, վիրաւորներու շուտափոյթ ապաքինման համար:

Աղօթենք, Հայաստանի եւ Արցախի ժողովուրդին անվտանգութեան պահպանման համար:

Աղօթենք, Հայաստանի ու Արցախի գերիշխանութեան եւ հողային ամբողջականութեան ամրացման համար:

Աղօթենք, հայոց աշխարհի պաշտպանութեան լծուած հայոց բանակին հզօրութեան համար:

Աղօթենք, հայ ժողովուրդի միասնականութեան ամրապնդման համար: Հաւատքով զսպանակուած ու յոյսով շաղախուած աղօթքի ճամբով Աստուած ներկայութիւն կը դառնայ մեր կեանքին մէջ, մենք Աստուծոյ հետ կ'ըլլանք եւ Աստուած՝ մեզի հետ: Եւ երբ Աստուած մեզի հետ է, Դաւիթ մարգարէի խօսքով՝ «ոչինչ կրնայ զիս սասանեցնել» (Սղ 16.8) եւ Պօղոս առաքեալին հաստատումով՝ «Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞ր կրնայ մեզի հակառակ ըլլալ» (Ռո 8.31):

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԻ...

Մկիթը՝ էջ 1

Յամառ եւ ոչ միշտ սահուն ընթացքով, համազգային նուիրումով յաջողեցանք ամրացնել հայոց պետականութիւնը՝ ՀՀ քաղաքացի ըլլալու հպարտութիւն ներշնչելով ողջ հայութեան:

Յաւօք, Անկախութեան 31-րդ տարեդարձը կը դիմաւորենք իրական պատերազմի միջավայրի մէջ, անվտանգային անասելի սպառնալիքներու, խոցուած ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան, համազգային նուաստացման մթնոլորտի մէջ, անդառնալի մարդկային կորուստներու ցաւով:

Եւ, այդուհանդերձ, այսօր, անելի քան երբեք, մեզ պետք է միաւորել

Անկախ պետականութեան, ազգային գոյատեւման եւ ազգային արժանապատուութեան խորհուրդը:

Անկախութիւն նուաճած ու յաղթանակներ պարտադրած ժողովուրդը ընկրկելու իրաւունք չունի:

Հայոց պետականութեան ապագան կասկածի տակ դնող այս իրականութիւնը կարելի է յաղթահարել միայն համազգային նպատակներ բանաձեւելով, միասնականութեամբ եւ ազգային պետական մտածողութիւն կրող իշխանութեամբ:

Այդ ներուժը մենք ունինք, մենք կրնանք, մենք նոր պարտութիւններու իրաւունք չունինք:

Միասին պաշտպանենք մեր Անկախութիւնը, տեր ըլլանք պետականութիւն եւ արժանապատիւ գոյութիւն ունենալու մեր իրաւունքին:

ՓԵՆՈՍԻ «ԽՍՏԻ»...

Մկիթը՝ էջ 1

րուն վրայ: Այս այցելութեան ընթացքին մենք կ'իմանանք որոշ մարտահրաւերներ, որոնք կ'ընդգծուին 2020-ի հակամարտութեան առնչուող խաղաղութեան համաձայնագիրին արդիւնքով», ըսած է Նենսի Փելոսին:

ԱՄՆ Ընկերակցի Ներկայացուցիչներու պալատի անդամ Ճէյի Սփինըր յայտնած է, որ Ներկայացուցիչներու պալատը արդէն բանաձեւ ստորագրած է, որով կը դատապարտէ Ատրպէյճանի գործողութիւնները:

«Յոյսով եմ, որ այդ բանաձեւով

առաջ կ'ուղղուինք: Մեր յանձնառութեան համաձայն, պիտի շարունակենք աջակցիլ Հայաստանի տարածքային ամբողջականութեան եւ դէմ պիտի կենանք Հայաստանի սահմաններու որեւէ փոփոխութեան», ըսած է Ճէյի Սփինըր:

Իր կարգին, ՀՀ Ազգային Ժողովի Նախագահ Ալէն Սիմոնեան ըսաւ. «Երախտապարտ ենք ԱՄՆ-ին, որուն միջնորդութեամբ ձեռք բերուեցաւ փխրուն զինադադար»:

«ԱՄՆ-ի որեւէ օժանդակութիւն կենսական նշանակութիւն ունի մեզի համար, յստակ պատժամիջոցները կրնան դառնալ մէկ լծակ ատրոպէյճանական ծաւալապաշտական նկրտումներուն դէմ», ըսած է Ալէն Սիմոնեան: